



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

**csode
po**
ՀԿ զարգացման
ծրագիր



ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՀՀ համալսարան

Հայաստանի կառավարման համակարգը և տնտեսությունը

Սույն ձեռնարկը ներկայացնում է Հայաստանի պետական իշխանության համակարգի, կառուցվածքը, տնտեսության կառուցվածքը և պետական պարտքի ամփոփ պատկերը՝ միաժամանակ տրամադրելով տեղեկատվություն հիմնական տնտեսական հասկացությունների և դրանց կիրառության վերաբերյալ: Ձեռնարկը ուղղված է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և առհասարակ լայն շրջանակների համար:

Հեղինակներ

Ընկերություն փորձագիտական ընկերություն

Էյլանորա Մաթևոսյան

Աշոտ Մարկոսյան

Վահագն Խաչատրյան

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) տեսլականն է նպաստել նրան, որ Հարավային Կովկասը կայանա որպես խաղաղ, հակամարտություններից զերծ և համագործակցող տարածաշրջան, կաշքի ընկնի քաղաքացիների ներգրավման բարձր մակարդակով, սոցիալապես պատասխանատու ձեռնբեցությամբ ու կայուն, պատասխանատու կարողունավետ հասարակությամբ: ԵՀՀ-ն տարիներ շարունակ աշխատում է քննադատական մտածողության կայուն տրանսպարենտ կրթության մեթոդների ասպարեզում իր մի շարք ծրագրերում, ինչպես, օրինակ, մարդու իրավունքների, կոնֆլիկտների տրանսֆորմացիայի և խաղաղարարության, քաղաքացիական հասարակության հզորացման և այլն:

Սույն ձեռնարկը մաս է կազմում «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակվող ձեռնարկների շարքի: Շարքն ընդգրկում է զրույցներ չորս ծավալուն թեմաների վերաբերյալ.

- Քննադատական մտածողություն (ՔՄ)
- Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)
- Քաղաքացիական հասարակություն (ՔՀ)
- Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)

Ձեռնարկը ստեղծվել է «ՀԿ Դեպո – Հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագրի» շրջանակում՝ Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Ծրագրի շրջանակում ստեղծված նյութերի բովանդակությունը կամ արտահայտված տեսակետները միմիայն Եվրասիա համագործակցություն հիմնադրամին են, և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

«ՀԿ Դեպո - Հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագիրը» խթանում է քաղաքացիական հասարակության կայուն զարգացումը և ուժգնացնում ՀԿ-ների՝ որպես բարեփոխումներն առաջ մղող, ծառայությունները բարելավող և տնտեսական, ժողովրդավարական ու սոցիալական ոլորտներում արդյունավետ կառավարմանը նպաստող դերակատարներ ի կարողությունները:

ՀՏԴ 352/354:338
ԳՄԴ 67.401+65.9

ISBN 978-9939-896-21-2

©Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2021

Հայաստանի կառավարման համակարգը և տնտեսությունը

1. Հայաստանի կառավարման համակարգը և տնտեսությունը.....	1
2. Հայաստանի տնտեսությունը. հիմնական տնտեսական հասկացությունները և դրանց կիրառումը	20
3. Տարածաշրջանի երկրների տնտեսական համագործակցությունը որպես երկրների ներուժի զարգացման միջոց. պետական պարտք.....	32

1. ՀՀ կառավարման համակարգը և տնտեսությունը Ընդլայդ փորձագիտական ընկերություն

Ներածություն

Այս ուղեցույցի նպատակն է պարզ և հակիրճ նկարագրել ՀՀ պետական իշխանության համակարգի կառուցվածքը: Ձեռնարկը ստեղծված է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, հասարակական կազմակերպություններին և քաղաքացիներին ՀՀ պետական իշխանության համակարգի կառուցվածքը, մարմինների լիազորությունների ընդհանուր պատկերը ներկայացնելու համար, ինչպես նաև ընդհանուր տեղեկություններ տալու առ այն, թե ինչպես և ում դիմել կոնկրետ իրավիճակներում:

Դրանից զատ՝ ձեռնարկը նաև հնարավորություն է տալիս քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին՝ տեղեկանալու, թե ինչպես նրանք կարող են մասնակցել պետական մարմինների գործունեությանը, դրանց հասարակական և այլ խորհուրդների ու հանձնաժողովների աշխատանքներին, ինչպես կարող են ներկա լինել պետական մարմինների նիստերին և հանրային լսումներին:

Ինչպես օգտվել այս ձեռնարկից

Ձեռնարկի բաժինները երկակի կառուցվածք ունեն: Դրանց մի մասը նախատեսված է ՔՀԿ-ներին պետական իշխանության համակարգի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն տրամադրելու համար: Այդ բաժինները կարող են օգտագործվել թե՛ կոնկրետ խնդիրների վերաբերյալ իրավասու մարմնին հայտնաբերելու, թե՛ պարզապես ընդհանուր գիտելիքների պաշարներն ավելացնելու համար:

Ձեռնարկը նաև կիրառական նշանակություն ունի, քանի որ դրանում նկարագրված են կոնկրետ մարմիններին դիմելու, դրանց աշխատանքներին մասնակցելու, պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու կարգավորումները և այլն: Այս առումով ձեռնարկը հետևում է ՀՀ Սահմանադրությամբ սահմանված հերթականությանը՝ ներկայացնելով օրենսդիր, գործադիր և դատական իշխանության աշխատանքներին մասնակցության և դրանց դիմելու կարգը:

Այստեղ առկա են նաև ինտերնետային կայքերի հղումներ, որոնք օգտագործողին ուղղում են դեպի սկզբնաղբյուր կայք կամ իրավական ակտ, և վերջիններս էլ մանրամասն տեղեկատվություն են պարունակում խնդրի վերաբերյալ:

Ցանկացած դեպքում պետական մարմնին դիմելուց կամ, օրինակ, որևէ խորհրդի անդամագրվելու հայտ ներկայացնելուց առաջ խորհուրդ է տրվում հետևել ձեռնարկում բերված հղմանը և ուսումնասիրել կոնկրետ հայտարարության և/կամ կարգի պահանջները: Այս առումով հարկ է նաև հաշվի առնել, որ այդ կայքերը ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել, մինչդեռ սույն ձեռնարկի տվյալները կարող են թարմացված չլինել:

Պետական իշխանության ճյուղերը, դրանց հիմնական գործառնությունները

ՀՀ [Սահմանադրության](#) 1-ին հոդվածը Հայաստանի Հանրապետությունը հռչակում է որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն: Հաջորդ իսկ հոդվածը սահմանում է, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին: Վերջինս իր այս իշխանությունն իրականացնում է երկու ձևով. ուղղակի՝ ազատ ընտրությունների, հանրաքվեների միջոցով, կամ միջնորդավորված՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով:

Սահմանադրության հաջորդող հոդվածները հանգամանորեն կարգավորում են այդ մարմինների փոխհարաբերությունները միմյանց, մարդու և հասարակության հետ: Մասնավորապես, Սահմանադրության մեջ մեծ կարևորություն է տրվում իշխանության տարանջատմանը և հավասարակշռմանը:

Այսպես, նախ՝ հանրային իշխանությունը բաշխվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև: Պետական իշխանությունն իր հերթին իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիմամբ:

Նշված սկզբունքը նպատակ է հետապնդում պետական իշխանության գործառույթների բաշխման միջոցով ստեղծելու միմյանց հակակշռող մի քանի բևեռներ, ինչը հնարավորություն կտա խուսափելու իշխանության կենտրոնացումից, մի բան, որն իր հերթին կարող է վտանգել ժողովրդավարական և իրավական պետության սկզբունքները: Այս առումով հարկ է նշել, որ մինչ ժողովրդավարական պետությունը ժողովրդի՝ երկրի ապագայի վերաբերյալ ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությունն է, իրավական պետությունը ենթադրում է իրավունքի գերակայություն, այսինքն՝ մարդու իրավունքների հարգման հիմամբ ձևավորված օրենքի հավասար կիրառում բոլորի նկատմամբ:

Իշխանությունների տարանջատման սկզբունքի իրացմամբ Սահմանադրությունը կանոնակարգում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ձևավորումն ու գործունեությունը: Օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը, որը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է: Այն ձևավորվում է համապետական ընտրությունների արդյունքում՝ հինգ տարի ժամկետով: Ազգային ժողովն ընդունում է օրենքներ՝ վարչագծի համապարտադիր կանոններ սահմանող ակտեր: Ընդ որում՝ միայն օրենքով կարող են սահմանափակվել մարդու՝ Սահմանադրությամբ երաշխավորված հիմնական իրավունքները: Դրանից զատ՝ Ազգային ժողովն օժտված է գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործառույթով և որոշում է, թե ինչ նպատակներով են ծախսվելու պետական բյուջեի միջոցները՝ դրանով իսկ սահմանափակելով գործադիրի գործողությունները:

Պատմականորեն գործադիր իշխանության խնդիրն է օրենքների կիրարկումը: Սահմանադրության համաձայն՝ գործադիր իշխանության խնդիրն է պետության ներքին և արտաքին քաղաքականության մշակումն ու իրականացումը: Գործադիր իշխանության բարձրագույն մարմինը կառավարությունն է, որն էլ մշակում ու իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը: Կառավարությունը՝ որպես կոլեգիալ մարմին, կազմված է վարչապետից, երկու փոխվարչապետներից և տասներկու նախարարներից: Գործադիր իշխանության մյուս մարմիններն են նախարարությունները, կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինները: Կառավարությունը և նրա անդամները կարող են ընդունել համապարտադիր նորմատիվ իրավական ակտեր՝ սահմանելով կարգեր, կանոնակարգեր և այլն, որոնք, սակայն, չեն կարող սահմանափակել մարդու հիմնական իրավունքները:

Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիրի նկատմամբ, հավանություն տալիս կառավարության ծրագրին, լսում է նրա տարեկան հաշվետվությունները և իրականացնում խորհրդարանական վերահսկողության այլ ձևեր: Կառավարությունն էլ իր հերթին օրենսդիր իշխանության գործողությունների վրա ազդեցության հնարավորություն ունի, մասնավորապես օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու, այն է՝ Ազգային ժողովին օրինագծեր առաջարկելու միջոցով: Բացի դրանից՝ գործադիր իշխանությունն է նախապատրաստում և Ազգային ժողովն ներկայացնում պետական բյուջեն՝ հաջորդող տարվա ծախսերի և եկամուտների նախագիծը:

Դատական իշխանությունն իրականացնում են դատարանները: Դատական իշխանությունն ապահովում է Սահմանադրության և օրենքների կիրառումը և կարող է անվավեր ճանաչել օրենսդիր կամ գործադիր իշխանության ընդունած ակտերը: Դատական կարգով կարող են նաև բողոքարկվել գործադիր իշխանության մարմինների գործողությունները կամ անգործությունը (այդ թվում՝ գործադիրին պարտադրվի իրականացնել որոշակի գործողություն):

Հարկ է նշել, որ վերոնշյալներից բացի՝ Սահմանադրությունը նախատեսում է պետական իշխանության մի շարք այլ մարմիններ և պաշտոնատար անձանց: Մասնավորապես, Սահմանադրության համաձայն՝ Ազգային ժողովն ընտրում է հանրապետության նախագահին, որը պետության գլուխն է, հետևում է Սահմանադրության պահպանմանը և օժտված է հիմնականում արարողակարգային լիազորություններով:

Դրանից զատ՝ Սահմանադրությամբ նախատեսված են այնպիսի մարմիններ, ինչպիսիք են դատախազությունը, քննչական մարմինները, Մարդու իրավունքների պաշտպանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, Հաշվեքննիչ պալատը և Կենտրոնական բանկը: Միաժամանակ Սահմանադրությունը նաև թույլ է տալիս Ազգային ժողովին օրենքով ստեղծել ինքնավար մարմիններ, ինչպիսիք են Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը:

1.1 Ազգային ժողով ***Կառուցվածք***

Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից: Այս թիվը կարող է տարբերվել յուրաքանչյուր ընտրությունների արդյունքներով: Ընտրությունների արդյունքներով պատգամավորական մանդատներ ստացած կուսակցությունների և դաշինքների պատգամավորներն ընդգրկվում են համապատասխան խմբակցությունում:

Պատգամավորներն իրենց կազմից ընտրում են Ազգային ժողովի նախագահին և նրա երեք տեղակալներին:

Ազգային ժողովում ստեղծվում են մշտական հանձնաժողովներ: Կարող են ստեղծվել Ժամանակավոր և քննիչ հանձնաժողովներ:

Մշտական հանձնաժողովները ստեղծվում են օրենքների նախագծերի, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար:

Ժամանակավոր հանձնաժողովը կարող է ստեղծվել առանձին օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների, ուղերձների ու նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար:

Քննիչ հանձնաժողովը կարող է ստեղծվել Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերը պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով:

Ազգային ժողովում որոշումները կայացվում են պատգամավորների քվեարկությամբ: Յուրաքանչյուր պատգամավոր ունի մեկ ձայն և ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված

չէ հրամայական մանդատով (այդ թվում՝ իր կուսակցության դիրքորոշմամբ), առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով:

ՔՀԿ հնարավոր ներգրավումը ԱԺ հանրային լսումներին և աշխատանքային խմբերի գործունեությանը

ԱԺ նիստերին կարող են ներկա լինել ԱԺ նախագահի կամ նիստը նախագահողի հրավիրած և կամ աշխատակազմի ղեկավարից թույլտվություն ստացած անձինք: ԱԺ նախագահը, մշտական հանձնաժողովները, առանձին օրինագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովները իրենց վերապահված ոլորտներին վերաբերող հարցերով, իսկ խմբակցությունը իր կամ խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորի առաջադրած նախագծի վերաբերյալ հարցով կարող են հրավիրել խորհրդարանական լսումներ:

Լսումների հրավիրման մասին որոշումը տեղադրվում է ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքում (<http://parliament.am/>), իսկ լսումների վերաբերյալ տեղեկատվությունը լսումների անցկացման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ տրամադրվում է զանգվածային լրատվության միջոցներին:

Լսումներին ՔՀԿ-ների մասնակցությունը կանոնակարգվում է համապատասխան [հանձնաժողովների](#) կանոնակարգերով, որոնց կարելի է ծանոթանալ ԱԺ պաշտոնական կայքի «Հանձնաժողովներ» բաժնում: Օրինակ՝ [Առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի](#) կազմակերպած լսումներին մասնակցելու կամ ներկա լինելու ցանկություն ունեցող անձինք լսումների անցկացման օրից երկու օր առաջ կարող են դիմել հանձնաժողովի նախագահին: Դիմողը կարող է մասնակցել կամ ներկա լինել լսումներին, եթե հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ նա կանխավ տեղեկացվում է այդ մասին:

1.2 Գործադիր իշխանություն

ՀՀ կառավարություն. կարգավիճակը

Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է: Այն կազմված է վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից:

Կառավարությունը կոլեգիալ մարմին է, որտեղ որոշումներն ընդունվում են քվեարկությամբ, ընդ որում՝ կառավարության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Վարչապետը կառավարության ծրագրի շրջանակում որոշում է կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում նրա գործունեությունը և համակարգում կառավարության անդամների աշխատանքը: Նա կարող է նաև կոնկրետ հարցերով հանձնարարականներ տալ կառավարության անդամներին:

Փոխվարչապետները վարչապետի հանձնարարությամբ համակարգում են կառավարության գործունեության առանձին ոլորտներ, իսկ նրանցից մեկը փոխարինում է վարչապետին նրա բացակայության ժամանակ:

Յուրաքանչյուր նախարար ինքնուրույն ղեկավարում է նախարարությանը վերապահված ոլորտը: Կառավարությունից զատ՝ գործադիր իշխանության համակարգում ներառված են նաև նախարարությունները և ենթակա մարմինները: Վերջիններս կարող են լինել կառավարությանը, վարչապետին կամ առանձին նախարարությանը ենթակա (նախկինում՝ առընթեր):

Լիազորությունների ընդհանուր նկարագիրը

Կառավարությունն Ազգային ժողովի հավանությունը ստացած իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը: Այս ընդհանրական ձևակերպումը պարառում է բազմաթիվ կոնկրետ լիազորություններ, որոնք կապված են պետության առօրյա կառավարման և ռազմավարական զարգացման հետ: Մասնավորապես, օրենքով սահմանված դեպքերում կառավարությունը կարող է ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ ակտ հանդիսացող որոշումներ, որոնցով կարող են սահմանվել կարգեր, կանոններ, կանոնակարգեր և վարքագծի այլ նորմեր: Բացի դրանից՝ կառավարությունն օժտված է բազմաթիվ այլ լիազորություններով: Օրինակ՝ կառավարությունն է որոշում կայացնում օտարերկրացիների կողմից ՀՀ քաղաքացի երեխաների որդեգրման վերաբերյալ, որոշ դեպքերում տարկետում է տալիս պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից, կանոնակարգում պետական գույքի արդյունավետ օգտագործումը և այլն: Ընդհանուր առմամբ, կառավարության իրավասության ներքո են գործադիր իշխանությանն առնչվող բոլոր այն հարցերը, որոնք վերապահված չեն պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններին: Կառավարությունն իրականացնում է նաև նախարարությունների և ենթակա մարմինների ընդհանուր ղեկավարումը:

Աշխատանքներին մասնակցելու կարգը

Կառավարությունն իր գործունեությունն իրականացնում է, որպես կանոն, դռնբաց նիստերի միջոցով, սակայն նիստերին ֆիզիկապես ներկա լինել կարող են միայն օրենքով սահմանված պաշտոնատար անձինք և վարչապետի կողմից հրավիրվածները: Կառավարության նիստին ներկա լինելու համար վարչապետի հրավեր ստանալու կարգ սահմանված չէ: Կառավարության նիստերը, իբրև կանոն, տեղի են ունենում շաբաթական մեկ անգամ՝ հինգշաբթի, Երևան քաղաքում: Ըստ անհրաժեշտության՝ կարող են հրավիրվել նաև արտահերթ կամ արտագնա նիստեր:

Կառավարության նիստի օրակարգի նախագիծը և դրանում ներառված հարցերը նիստի անցկացումից առնվազն մեկ օր առաջ հրապարակվում են կառավարության պաշտոնական կայքում (www.e-gov.am/sessions), որից հետո օրակարգի նախագծում կատարվող փոփոխությունները (հարցեր հանելը կամ նոր հարցեր ներառելը) հրապարակվում են անմիջապես:

Կառավարությունը, վարչապետը և փոխվարչապետները ձևավորում են նաև խորհրդակցական մարմիններ, որոնց կազմում կարող են ներգրավվել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Այդպիսի մարմիններ են՝

1. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը ([ՀՀ վարչապետի 2019 թ. հունիսի 24-ի N 808-Ն](#) որոշում), որի կազմում կարող են ընդգրկվել հասարակական կազմակերպությունների 5 ներկայացուցիչ: Դրա համար անցկացվում է մրցույթ, որի մեկնարկից առնվազն 10 օր առաջ հրապարակվում է հայտարարությունը ՀՀ վարչապետի աշխատակազմի պաշտոնական www.gov.am կայքում, ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական www.moj.am կայքում և anti-corruption.gov.am հարթակում:

2. ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհուրդը ([ՀՀ վարչապետի 2011 թ. հուլիսի 7-ի N 638-Ն](#) որոշում), որի կազմում կարող են ընդգրկվել գործարար համայնքի շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների և առևտրաարդյունաբերական պալատների ներկայացուցիչներ: Խորհրդի կազմում ընդգրկվելու ժամանակաշրջանի ավարտին նախորդող եռամսյակում էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում

(<http://www.mineconomy.am/>) հայտարարություն է հրապարակվում նոր անդամների թեկնածությունների ընտրության նպատակով:

3. «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությունում ՀՀ մասնակցության գործողությունների Չորրորդ ծրագրի մշակման և ծրագրից բխող աշխատանքների համակարգման նպատակով ստեղծված աշխատանքային խումբը ([ՀՀ վարչապետի 2019 թ. հուլիսի 19-ի N 983-Ս որոշում](#)): Ներգրավման գործընթացն այստեղ կանոնակարգված չէ: Նորություններին հնարավոր է հետևել <https://www.ogp.am/hy/> կայքում:

4. ՀՀ կայուն զարգացման ազգային խորհուրդ ([ՀՀ վարչապետի 2015 թ. մարտի 9-ի N 167-Ս որոշում](#)). Խորհրդի կազմում ընդգրկվում են կայուն զարգացման ոլորտում կանոնադրական նպատակներ իրականացնող հասարակական կազմակերպությունների, գործատուների միությունները: Խորհրդի կազմը հաստատված է, դրանում փոփոխությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ՝ խորհրդի առաջարկությամբ:

5. Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհուրդ ([ՀՀ վարչապետի 2019 թ. մայիսի 3-ի N 486-Ս որոշում](#)). Խորհուրդը կազմված է ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից՝ յուրաքանչյուր ազգային համայնքից երկուական անդամ: Խորհրդի անդամ, բացառությամբ խորհրդի առաջին կազմի, ընտրվում են ազգային փոքրամասնության յուրաքանչյուր համայնքը ներկայացնող, առնվազն հինգ տարվա ազգային-մշակութային գործունեություն ծավալած (սկսած պետական գրանցման պահից) հասարակական կազմակերպությունները համայնքը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ընդհանուր ժողովում: Ընդհանուր ժողովը երկու տարին մեկ անգամ ընտրում է խորհրդի երկու նոր անդամների:

6. Հայաստանի Հանրապետության տարածքում քարանձավների՝ զբոսաշրջության նպատակով օգտագործելու հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով ստեղծված աշխատանքային խումբ ([ՀՀ վարչապետի 2015 թ. հունիսի 3-ի N 460-Ս որոշում](#)): Ներգրավման գործընթացը կանոնակարգված չէ, սակայն ներգրավված են մի շարք հասարակական կազմակերպություններ:

7. «Աշխատիր Հայաստան» ծրագրի իրականացման աշխատանքային խումբ ([ՀՀ փոխվարչապետի 2019 թ. ապրիլի 26-ի N 230-Ս որոշում](#)): Խմբի նիստերի աշխատանքներին մասնակցելու համար կարող են հրավիրվել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ՀՀ կառավարության կողմից ժամանակ առ ժամանակ ստեղծվում են այլ խորհուրդներ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է www.e-gov.am կայքում:

Ընտրված նախարարություններ. կարգավիճակը

Յուրաքանչյուր նախարարություն մշակում և իրականացնում է «[Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին](#)» ՀՀ օրենքով իրեն վերապահված գործունեության ոլորտում կառավարության քաղաքականությունը: Դա ենթադրում է օրենքով սահմանված դեպքերում կարգերի, կանոնների կամ այլ համապարտադիր իրավական ակտերի ընդունում, ոլորտի պետական կազմակերպությունների կառավարում, ոլորտում պետական ծրագրերի մշակում ու իրականացում և այլն:

Նախարարության գործունեությունը ղեկավարում է համապատասխան նախարարը, որը հաշվետու է կառավարությանը և վարչապետին: Նախարարն ունի տեղակալներ, իսկ նախարարությունը՝ գլխավոր քարտուղար, կառուցվածքային ստորաբաժանումներ (բաժիններ, վարչություններ): Կարող է ունենալ նաև գրասենյակներ: Բացի դրանից՝ նախարարությանը կարող են ենթակա լինել առանձին մարմիններ և պետական կազմակերպություններ:

Լիազորությունների ընդհանուր նկարագիրը

Յուրաքանչյուր նախարարությանը վերապահված գործունեության հիմնական ոլորտները սահմանված են «[Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին](#)» ՀՀ օրենքով: Նախարարությունների այլևայլ լիազորություններ կարող են սահմանվել այլ օրենքներով: Նախարարության լիազորությունները հիմնականում ներառված են ՀՀ վարչապետի կողմից հաստատված նախարարությունների կանոնադրություններում: Ստորև բերված են որոշ նախարարությունների հիմնական գործառնությունները:

1. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակում և իրականացնում է աշխատանքի ու սոցիալական պաշտպանության, բնակչության զբաղվածության և ժամանակավոր անաշխատունակության դեպքում սոցիալական ապահովության, պետական կենսաթոշակային ապահովության, սոցիալական աջակցության, ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության, հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտներում կառավարության քաղաքականությունը:
2. Առողջապահության նախարարությունը մշակում և իրականացնում է առողջապահության, բժշկական օգնության որակի և արդյունավետության բարձրացման, մարդու և հանրության առողջության պահպանման, բնակչության առողջության բարելավման, հիվանդությունների կանխարգելման, հաշմանդամության և մահացության ցուցանիշների նվազեցման, աշխատողների առողջության և անվտանգության պահպանման, մոր և մանկան առողջության պահպանման, արտակարգ իրավիճակներում բնակչության բժշկական օգնության ապահովման, հանրապետությունում արտադրվող և ներմուծվող դեղերի անվտանգության, որակի և արդյունավետության ապահովման, հանրային առողջության և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, լիցենզավորման և դեղերի պետական գրանցման ոլորտներում կառավարության քաղաքականությունը:
3. Արդարադատության նախարարությունը մշակում և իրականացնում է արդարադատության, այդ թվում՝ հարկադիր կատարման, քրեակատարողական, պրոբացիայի, սնանկության, փաստաբանության, հաշտարարության, նոտարական գործունեության, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման և հաշվառման, անհատ ձեռնարկատերերի, զանգվածային լրատվության միջոցների հաշվառման, անձնական տվյալների պաշտպանության, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման, իրավական փորձաքննության, միջազգային իրավական փոխօգնության, հակակոռուպցիոն և պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների գործունեության ոլորտներում կառավարության քաղաքականությունը:
4. Շրջակա միջավայրի նախարարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման, մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, կլիմայի փոփոխության հիմնախնդիրների լուծմանն ուղղված, ներառյալ հարմարվողականության, ինչպես նաև բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման, վերականգնման և վերարտադրության, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ապահովման, էկոլոգիական գիտության, կրթության և իրազեկման ապահովման ոլորտներում կառավարության քաղաքականությունը:
5. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը մշակում և իրականացնում է կրթության, գիտության և լեզվի, հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդման, ազգային և համամարդկային արժեքների պահպանման ու զարգացման,

գիտական և գիտատեխնիկական, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի համակարգի բնականոն գործունեության ապահովման, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառների պահպանման ու զարգացման ապահովման, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի համակարգերի որակի և արդյունավետության մոնիտորինգի և գնահատման, մշակույթի զարգացման, մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, օգտագործման, հանրահռչակման, երիտասարդների մասնակցային գործընթացների խթանման, հոգևոր-մշակութային, ազգային ինքնության զարգացման, հայրենասիրական դաստիարակության, իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված կառավարության քաղաքականությունը:

Աշխատանքներին մասնակցելու կարգը

Հասարակական խորհուրդներ ([ՀՀ կառավարության 2018 թ. մայիսի 22-ի N 624-Լ որոշում](#), [ՀՀ կառավարության 2015 թ. նոյեմբերի 26-ի նիստի N 52](#) արձանագրային որոշում):

Բոլոր նախարարություններում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովման նպատակով նախարարին կից ստեղծվում է հասարակական խորհուրդ: Հասարակական խորհուրդը՝

- 1) աջակցում է նախարարության խնդիրների և նպատակների առավել արդյունավետ իրականացմանը՝ ներկայացնելով առաջարկություններ ու դիտողություններ նախարարության ընդհանուր քաղաքականության առավել արդյունավետ իրականացման վերաբերյալ,
- 2) հասարակական կազմակերպությունների կամ այլ շահագրգիռ անձանց մասնակցությամբ քննարկում է հասարակության տարբեր շերտերի կարծիքներն ու տեսակետները նախարարության խնդիրների և նպատակների իրականացման վերաբերյալ,
- 3) ներկայացնում է առաջարկություններ և դիտողություններ՝
 - ա. նախարարության կողմից շրջանառվող իրավական ակտերի, հայեցակարգերի, ռազմավարությունների ու միջոցառումների ծրագրերի նախագծերի վերաբերյալ և աջակցում է հանրային քննարկումների կազմակերպմանն ու իրականացմանը,
 - բ. նախարարության կողմից ձեռնարկվող բարեփոխումների, ընդհանուր և ոլորտային քաղաքականության ուղղությունների, ինչպես նաև նախարարության կողմից իրականացվող այլ աշխատանքների առաջնահերթությունների վերաբերյալ,
 - գ. նախարարության ընթացիկ գործունեության, գրասենյակների կողմից մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ:

Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել հասարակական կազմակերպություններ, զանգվածային լրատվության միջոցներ, ազգային փոքրամասնություններ ներկայացնող կազմակերպություններ, ինչպես նաև այլ շահագրգիռ անձինք, որոնց

- գործունեության բնույթը համընկնում է նախարարության գործունեության հիմնական ուղղություններին,
- համապատասխան ոլորտում ունեն առնվազն 2 տարվա մասնագիտական փորձառություն (իրականացրել կամ մասնակցել են ոլորտին առնչվող ծրագրերի, փորձագիտական աշխատանքների իրականացմանը, ունեն ոլորտին առնչվող հրապարակումներ, մասնակցել են նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբերի, հանձնաժողովների աշխատանքներին, ոլորտին առնչվող հարցերով համագործակցել են միջազգային կազմակերպությունների հետ և այլն),
- մասնակցությունը խորհրդի աշխատանքներին կարող է նպաստել խորհրդի առջև դրված խնդիրների և նպատակների առավել արդյունավետ իրականացմանը:

Խորհրդի կազմում չեն կարող ընդգրկվել այն անձինք կամ կազմակերպությունները, որոնք տվյալ պահին ֆինանսավորում են ստանում (դրամաշնորհ կամ ծառայությունների մատուցում՝ [«Գնումների մասին»](#) ՀՀ օրենքի համաձայն) համապատասխան նախարարությունից:

Նախարարը, ելնելով նախարարության գործունեության առանձնահատկություններից, նախարարության կողմից ֆինանսավորվող կազմակերպություններին կամ անձանց կարող է ընդգրկել Խորհրդի կազմում պատճառաբանված որոշման հիմամբ, որը հրապարակվում է նախարարության պաշտոնական կայքում:

Խորհրդի կազմում ընդգրկվելու նպատակով կազմակերպությունները համապատասխան նախարարության պաշտոնական կայքում հրապարակված հայտարարության հիման վրա դիմում են ներկայացնում համապատասխան նախարարին:

Կոնկրետ նախարարությունների առանձին խորհուրդներ

1. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

1) Ընտանիքում բռնության կանխարգելման խորհուրդ ([ՀՀ կառավարության 2018 թ. հուլիսի 10-ի N 786-Ն](#) որոշում), որի կազմում ընդգրկվում են ութ ներկայացուցիչ՝ ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններից (յուրաքանչյուրից մեկական ներկայացուցիչ)՝ ընդգրկվելով առնվազն վերջին երեք տարիներին հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող առնվազն մեկ հասարակական կազմակերպության ներկայացուցիչ:

Խորհրդի կազմում ընդգրկվելու համար նախապատվությունը տրվում է ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության ոլորտում առավել երկար գործունեություն իրականացրած կազմակերպություններին: Խորհրդի վերաբերյալ նորություններին կարելի է ծանոթանալ <http://www.mlsa.am> կայքում:

2) Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման գոհերի նույնացման հանձնաժողով ([ՀՀ կառավարության 2015 թ. հուլիսի 30-ի N 851-Ն](#) որոշում): Կազմակերպությունների ներկայացուցիչների ընտրության գործընթացը սկսելուց տասն աշխատանքային օր առաջ հրապարակվում է հայտարարություն առնվազն 1000 տպաքանակ ունեցող մամուլում, ինչպես նաև նախարարության պաշտոնական կայքում (<http://www.mlsa.am>) և <http://www.azdarar.am> հասցեում:

2. Արդարադատության նախարարություն

1) Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի թեկնածությունների առաջարկում ([ՀՀ կառավարության 2015 թ. հուլիսի 2-ի N 736-Ն](#) որոշում):

Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարը նշանակվում է հինգ տարի ժամկետով՝ իրավապաշտպան գործունեություն իրականացնող առնվազն հինգ հասարակական կազմակերպությունների համատեղ առաջարկությունների հիման վրա: Հասարակական կազմակերպությունների կողմից թեկնածություններ ներկայացնելու վերաբերյալ հայտարարությունը ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմը անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի պաշտոնը թափուր մնալուց հետո ոչ ուշ, քան 10-օրյա ժամկետում հրապարակում է նախարարության պաշտոնական ինտերնետ կայքի միջոցով (www.moj.am):

***Ընտրված ենթակա մարմիններ (տեսչական մարմիններ, կոմիտեներ, ծառայություններ և այլն)
Ընդհանուր նկարագիրը***

Ենթակա մարմինն ապահովում է կառավարության քաղաքականության՝ օրենքով իրեն վերապահված առանձին ուղղության իրականացումը, ինչպես նաև աջակցում է իրեն վերապահված ուղղության շրջանակներում կառավարության քաղաքականության մշակմանը: Ենթակա մարմինների ենթակայությունը որոշվում է [օրենքով](#)՝ կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների դեպքում, և [կառավարության որոշմամբ](#)՝ նախարարություններին ենթակա մարմինների դեպքում:

Ենթակա մարմինները հիմնականում ծառայություններ (Պետական վերահսկողական ծառայություն, Սոցիալական ապահովության ծառայություն, քրեակատարողական ծառայություն և այլն), կոմիտեներ (Գիտության կոմիտե, Անտառային կոմիտե և այլն) կամ տեսչական մարմիններ են:

Լիազորությունների ընդհանուր նկարագիրը

[Տեսչական մարմինները](#) վերահսկողություն իրականացնող պետական մարմիններ են: Տեսչական մարմնի նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իր վերահսկողության ոլորտում անվտանգության և (կամ) օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է, որին համապատասխան՝ տեսչական մարմին իրականացնում է տնտեսվարող սուբյեկտների կողմից օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն, այդ թվում՝ ստուգումներ է իրականացնում և օրենսդրության պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ է կիրառում:

Ծառայությունների և կոմիտեների լիազորությունները սահմանվում են առանձին օրենքներով և կարող են վերաբերել կոնկրետ ոլորտում ծառայությունների մատուցման, որոշակի իրավակիրառ գործունեության իրականացմանը:

Աշխատանքներին մասնակցելու կարգը

Որոշ ենթակա մարմինների ղեկավարներ ձևավորում են իրենց կից հասարակական խորհուրդներ: Մասնավորապես, [ՀՀ ոստիկանության պետին կից](#) գործում է հասարակական խորհուրդ, որի կազմում ընդգրկվում են առնվազն 15 անդամներ: Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել հասարակական կազմակերպությունների (միավորումների) ներկայացուցիչներ, իրավապահ գործունեության ոլորտում առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ ունեցող անձինք, իրավապաշտպաններ, մշակութային և հասարակական այլ գործիչներ, որոնց մասնակցությունը խորհրդի աշխատանքներին կարող է նպաստել նրա գործառույթների արդյունավետ իրականացմանը: Միևնույն ժամանակ խորհրդի կազմում չեն կարող ընդգրկվել այն անձինք կամ կազմակերպությունները, որոնք տվյալ պահին ֆինանսավորում են ստանում (ղրամաշնորհ կամ ծառայությունների մատուցում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն) ՀՀ ոստիկանությունից:

[Տեսչական մարմինների կառավարման խորհուրդների կազմում](#) ընդգրկվում են տեսչական մարմնի իրավասության բնագավառում քաղաքացիների կամ սպառողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպության ներկայացուցիչը, տեսչական մարմնի իրավասության բնագավառում համապատասխան գործունեություն իրականացնող գործարար միավորումների ներկայացուցիչը և համապատասխան բնագավառների գիտական կազմակերպությունների երկու ներկայացուցիչ, որոնք չեն կարող լինել համապատասխան բնագավառի քաղաքականությունը

մշակող պետական կառավարման մարմնի ենթակայությամբ գործող մարմնի կամ կազմակերպության աշխատակիցներ:

Հասարակական կազմակերպությունների և գիտական կազմակերպության ներկայացուցիչներին ներգրավելու նպատակով վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակն իր պաշտոնական կայքում հրապարակում է հայտարարություն:

Դիմելու կամ տեղեկատվություն ստանալու կարգը

Պետական բոլոր մարմիններից տեղեկատվության ստացման կարգը սահմանված է [«Տեղեկատվության ազատության մասին»](#) ՀՀ օրենքով: Հարցումը կարող է ներկայացվել առձեռն, փոստով, որոշ դեպքերում՝ էլեկտրոնային եղանակով:

Գրավոր հարցման մեջ նշվում են դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը): Դիմումները կարող են լինել երկու տեսակի՝ վարչարարության կարգով քննության ենթակա դիմումներ և հանրագրեր:

Վարչարարության կարգով ներկայացված դիմումներն այն դիմումներն են, որոնցով հայցվում է դիմողի համար վարչական ակտի (արտաքին ներգործություն ունեցող որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտը, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և այն ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն) ընդունում: Այդպիսի ակտեր կարող են լինել, օրինակ, շինարարության կամ որևէ այլ թույլտվությունը, լիցենզիան, կենսաթոշակի կամ նպաստի նշանակումը և այլն:

Նման դիմումները պետք է ներկայացվեն գրավոր և պարունակեն՝

- ա) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը,
- բ) դիմողի հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը),
- գ) վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է դիմումը,
- դ) դիմումով ներկայացվող պահանջը (դիմումի առարկա),
- ե) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են),
- զ) դիմումը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը,
- է) դիմողի ստորագրությունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու

պաշտոնատար անձի ստորագրությունը:

Նման դիմումի ներկայացման դեպքում (եթե այն ներկայացվել է իրավասու մարմնին՝ վերոնշյալ ձևական պահանջների պահպանմամբ) այն ստանալու պահից հարուցվում է վարչական վարույթ, որի տևողությունը, որպես կանոն, չի կարող գերազանցել 30 օրը: Վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի կայացմամբ, այսինքն՝ դիմումը բավարարվում կամ մերժվում է իրավական հիմնավորումներով: Ի տարբերություն դիմումների՝ հանրագիրը հանրային նշանակություն ունեցող հարցերով ներկայացվող գրություն կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության թերությունների կամ բարելավման մասին հաղորդում, տնտեսական, քաղաքական, սոցիալական և հասարակական կյանքի այլ ոլորտներին վերաբերող հարցերի կարգավորման կամ գործող իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ առաջարկություն է: Օրինակ՝ հանրագիր կարող է հանդիսանալ օրենքի փոփոխություն կատարելու մասին առաջարկությունը՝

ուղղված Ազգային ժողովին, կամ բյուջետային միջոցների առավել արդյունավետ ծախսման վերաբերյալ առաջարկը՝ ուղղված կառավարությանը:

Հանրագիրը պետք է բովանդակի հետևյալ տեղեկությունները.

- 1) «Հանրագիր» վերտառությունը,
- 2) ֆիզիկական անձի դեպքում՝ հանրագիրը ներկայացնող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման վայրի հասցեն, կապի միջոցի վերաբերյալ տվյալներ,
- 3) իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, մշտապես գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն, կապի միջոցի վերաբերյալ տվյալներ,
- 4) կոլեկտիվ հանրագրի դեպքում՝ նաև հանրագիր ներկայացրած այն պատասխանատու անձը, որ լիազորված է հանդես գալու հանրագիրը ներկայացնողների անունից,
- 5) հանրագիրը ներկայացուցչի միջոցով ներկայացվելու դեպքում՝ նրա անունը, ազգանունը, բնակության, հաշվառման կամ գործունեության վայրի հասցեն, կապի միջոցի վերաբերյալ տվյալներ,
- 6) այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը կամ պաշտոնատար անձի անունը, որին ուղղված է հանրագիրը,
- 7) հանրագիր ներկայացնող անձի առաջարկը, ինչպես նաև հիմնավորումը՝ ցանկության դեպքում:

Հանրագիր ներկայացրած անձն իրավունք ունի մարմնի կողմից այն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում ստանալու պատշաճ պատասխան: Դա չի նշանակում, որ արված առաջարկությունը կբավարարվի, այլ միայն իրավունք է տալիս պետական մարմնից ակնկալելու պատասխան:

Վերադասության կարգով վարչական մարմինների գործողությունների (անգործության) բողոքարկում

«[Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին](#)» ՀՀ օրենքի համաձայն՝ վարչական ակտը («վարչական ակտ» հասկացության մասին՝ 6.4-ում), վարչական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի գործողությունը կամ անգործությունը կարող են բողոքարկվել վարչական մարմնի կամ դրա նկատմամբ վերադաս վարչական մարմին, ինչպես նաև դատարան:

Եթե ակտը բողոքարկվել է ակտն ընդունած վարչական մարմին և (կամ) բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմին, ապա բողոքը ենթակա է քննարկման բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմնում:

Որոշ դեպքերում գործում է բողոքարկման հատուկ ընթացակարգ: Մասնավորապես [տեսչական մարմինների](#) և դրանց ծառայողների գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտը կարող է բողոքարկվել ակտն ընդունած տեսչական մարմին կամ դատարան:

Հարկային մարմնի ընդունած անհատական իրավական ակտը, ինչպես նաև հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով կամ դատարան:

Պաշտոնատար անձանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը

«[Քաղաքացիական ծառայության մասին](#)» ՀՀ օրենքի համաձայն՝ քաղաքացիական ծառայողները, այսինքն՝ օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններում, հանրապետության նախագահի աշխատակազմում, դատախազությունում, քննչական մարմիններում, անկախ պետական մարմիններում, ինքնավար մարմիններում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում, ինչպես նաև կառավարությանը, վարչապետին և նախարարություններին

ենթակա պետական մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձինք կարող են ենթարկվել կարգապահական տույժի՝ իրենց պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից:

Կարգապահական տույժը նշանակվում է ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ծառայողական լիազորությունները վերազանցելու, աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու, շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում: Տույժի կիրառմանը պետք է նախորդի ծառայողական քննությունը:

Տույժի կիրառման հարցով անհրաժեշտ է դիմել համապատասխան պաշտոնատար անձի՝ կանխավ ճշտելով, թե արդյոք տվյալ անձը քաղաքացիական ծառայող է: Քաղաքացիական ծառայող չեն նախարարները, նրանց օգնականները կամ խորհրդականները, դատավորները: Նման պաշտոնատար անձանց պատասխանատվության հարցերը կարգավորվում են համապատասխան օրենքներով:

Մասնավորապես, դատավորների կարգապահական պատասխանատվության հարցը կարգավորվում է [Դատական օրենսգրքով](#), համաձայն որի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության է ենթարկում Բարձրագույն դատական խորհուրդը:

Էլեկտրոնային եղանակով դիմելու կամ բողոք ներկայացնելու կարգը


Ներկայումս գործում են էլեկտրոնային մի շարք հարթակներ, որոնց միջոցով հնարավոր է դիմումներ կամ բողոքներ ներկայացնել պետական մարմիններին կամ նրանց գործունեության վերաբերյալ: Մասնավորապես, <https://www.e-request.am> հարթակը թույլ է տալիս մեկ պատուհանի սկզբունքով ներկայացնել գործադիր մարմիններին վերաբերող դիմումներ, բողոքներ կամ հարցումներ: Համակարգից օգտվելու համար, սակայն, անհրաժեշտ է ունենալ թվային էլեկտրոնային ստորագրություն, որը հնարավոր է ակտիվացնել նույնականացման քարտի (ID քարտ) առկայության դեպքում:

Մեկ այլ հարթակ՝ www.azdararir.am, թույլ է տալիս անանուն հաղորդագրություններ ներկայացնել կոռուպցիոն բնույթի դեպքերի հայտնաբերման մասին: Դատական համակարգի աշխատանքի և դատական գործերի ընթացքի մասին տեղեկատվություն կարելի է ստանալ DATALEX համակարգից (<http://www.datalex.am/?app=AppCaseSearch>):

1.3. Դատական իշխանություն

Կառուցվածքը

Հայաստանի Հանրապետությունում գործում են [Սահմանադրական](#) դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները (քաղաքացիական, քրեական և վարչական), առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև մասնագիտացված դատարանները (վարչական և սնանկության): Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները տասն են՝ ըստ մարզերի (Արարատի և Վայոց ձորի մարզերը միասին) և Երևան քաղաքի¹:



Առանձին դատարանների իրավասությունները

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները քննում են քաղաքացիական, այսինքն՝ անձանց միջև պայմանագրային (այդ թվում՝ պետության կամ համայնքի հետ կնքված), այլ գործարքների կամ վնասի հատուցման հետ կապված վեճերը, ինչպես նաև քրեական (հանցագործությունների վերաբերյալ) գործերը:

Վարչական դատարանը քննում է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերը: Դրանք են մասնավորապես այն դեպքերը, երբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել ֆիզիկական կամ իրավաբանական անձի իրավունքները և ազատությունները, կամ անձի վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն:

Վերաքննիչ դատարանները վերանայում են առաջին ատյանի համապատասխան դատարանների՝ բողոքարկման ենթակա դատական ակտերը: Այսինքն՝ առաջին ատյանի դատարանի կայացրած դատական ակտը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան: Հարկ է նշել, որ առաջին ատյանի դատարանի ոչ բոլոր ակտերն են ենթակա բողոքարկման, և այդ հարցը կարգավորվում է

¹ Դատական համակարգի, դատարանների հասցեների վերաբերյալ տվյալները կարելի է ստանալ դատական համակարգի <http://court.am/> կայքից:

համապատասխանաբար քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության մասին օրենսգրքերով:

Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր կայացրած դատական ակտերը: Վճռաբեկ դատարանի գործառնություն է ապահովել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և վերացնել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները: Այս նպատակով վերաքննիչ դատարանների դատական ակտերը կարող են բողոքարկվել վճռաբեկ դատարան, սակայն վերջինս բողոքը վարույթ կընդունի միայն այն դեպքում, երբ համարի, որ առկա է նշված խնդիրներից որևէ մեկը:

Սահմանադրական դատարանն իրականացնում է սահմանադրական արդարադատությունը, այսինքն՝ որոշում է օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, Սահմանադրության փոփոխությունների և հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի, վավերացման ենթակա միջազգային պայմանագրերի համապատասխանությունը Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանը նաև լուծում է հանրաքվեի, Ազգային ժողովի և հանրապետության նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը և իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հիմնական դեպքեր, երբ ՔՀԿ-ն կարող է դիմել դատարան

Հասարակական կազմակերպությունները դատարան կարող են դիմել երկու հիմնական դեպքերում.

ա) իրավասու դատարան, երբ խախտվել են կազմակերպության իրավունքները, օրինակ՝ երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, կամ պետական մարմինը անօրինական գործողություններ է իրականացրել կազմակերպության նկատմամբ, բ) վարչական դատարան՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում հասարակական կազմակերպության շահառուների օրինական շահերը պաշտպանելու համար:

Վերջին դեպքում կազմակերպությունը կարող է հայց ներկայացնել միայն եթե՝

- 1) հայցադիմումը բխում է կազմակերպության կանոնադրական նպատակներից ու խնդիրներից և ուղղված է կազմակերպության շահառուների՝ կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությանը,
- 2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում մասնակցել է հիմնադրությամբ փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին, կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չի տրվել, և
- 3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում գործունեություն է ծավալել շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում:

Հասարակական կազմակերպությունը կարող է նաև հանդես գալ որպես խմբային հայցով ներկայացուցիչ: Խմբային է այն հայցը, որով քաղաքացիական դատավարության շրջանակներում առնվազն 20 հայցվորի կողմից համատեղ հայց է ներկայացվում նույն պատասխանողի դեմ, որով բոլոր հայցվորների հայցի առարկան և հիմքը նույնն են: Նման դեպքեր կարող են լինել, օրինակ, մի խումբ սպառողների պահանջը նույն ապրանքի թերությունների վերաբերյալ կամ մի խումբ բնակիչների հայցն ընդդեմ տարածքն աղտոտող արտադրության:

Բացի դրանից՝ Սահմանադրությունը նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների համար հնարավորություն է նախատեսում դիմելու

Սահմանադրական դատարան, եթե ՀԿ-ն սպառել է բոլոր հնարավոր այլ դատական միջոցները, սակայն գործով կիրառվել է նորմատիվ իրավական ակտի հակասահմանադրական դրույթ, ինչն էլ հանգեցրել է նրա հիմնական իրավունքների և ազատությունների խախտմանը: Այս դեպքում վերջնական դատական ակտի առկայության պարագայում ՀԿ-ն կարող է վիճարկել կիրառված նորմատիվ ակտի սահմանադրականությունը Սահմանադրական դատարանում:

Գրականության ցանկ

ՀՀ Սահմանադրություն՝ 06.12.2015 թ. փոփոխություններով
«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք
«Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք
«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենք
«Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենք
«Գնումների մասին» ՀՀ օրենք
«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենք
«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք
«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք
«Հանրագրերի մասին» ՀՀ օրենք
ՀՀ կառավարության 2018 թ. մայիսի 22-ի N 624-Լ որոշում
ՀՀ կառավարության 2018 թ. հուլիսի 10-ի N 786-Ն որոշում
ՀՀ կառավարության 2015 թ. հուլիսի 30-ի N 851-Ն որոշում
ՀՀ կառավարության 2015 թ. հուլիսի 2-ի N 736-Ն որոշում
ՀՀ կառավարության 2018 թ. մայիսի 22-ի N 580-Ս որոշում
ՀՀ կառավարության 2019 թ. օգոստոսի 8-ի N 1000-Ն որոշում
ՀՀ կառավարության 2015 թ. նոյեմբերի 26-ի նիստի N 52 արձանագրային որոշում
ՀՀ վարչապետի 2019 թ. հունիսի 24-ի N 808-Ն որոշում
ՀՀ վարչապետի 2019 թ. հուլիսի 19-ի N 983-Ս որոշում
ՀՀ վարչապետի 2015 թ. մարտի 9-ի N 167-Ս որոշում
ՀՀ վարչապետի 2019 թ. մայիսի 3-ի N 486-Լ որոշում
ՀՀ վարչապետի 2015 թ. հունիսի 3-ի N 460-Ս որոշում
ՀՀ փոխվարչապետի 2019 թ. ապրիլի 26-ի N 230-Ս որոշում
ՀՀ ոստիկանության հայտարարությունը ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհուրդ ստեղծելու մասին

Առցանց աղբյուրներ

Ազգային ժողովի պաշտոնական կայք (<http://parliament.am/>)
ՀՀ կառավարության պաշտոնական կայք (www.e-gov.am)
ՀՀ վարչապետի աշխատակազմի պաշտոնական կայք (www.gov.am)
ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայք (www.moj.am)
ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք (<http://www.mineconomy.am/>)
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայք (<http://www.mlsa.am>)
ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական կայք (<http://www.azdarar.am>)
ՀՀ հակակոռուպցիոն մոնիթորինգի պլատֆորմի պաշտոնական կայք (anti-corruption.gov.am)
«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության պաշտոնական կայք (<http://www.ogp.am/hy/>)

2. Հայաստանի տնտեսությունը. հիմնական տնտեսական հասկացությունները և դրանց կիրառումը Ընդվայր փորձագիտական ընկերություն

Ներածություն

Սույն ձեռնարկի նպատակն է ընթերցողին տրամադրել հակիրճ և բովանդակալից տեղեկատվություն հիմնական տնտեսական հասկացությունների և դրանց կիրառության վերաբերյալ: Առաջին մասում քննության են առնվում մակրոտնտեսական, ապա՝ միկրոտնտեսական մի շարք հասկացություններ, որին հաջորդում է վերլուծություն ներդրումային քաղաքականության և ՓՄՁ ոլորտի, ինչպես նաև տնտեսության մեջ ՀԿ-ների դերի կարևորության մասին:

2.1. Մակրոտնտեսական հասկացություններ

Ի՞նչ է տնտեսական աճը, և որո՞նք են տնտեսական աճի հիմնական ցուցանիշները

Մակրոտնտեսագիտության հիմքում տնտեսության դիտարկումն է իբրև մեկ ամբողջություն, որն արտացոլում է պետության համախառն ներքին արդյունքի, տնային տնտեսությունների սպառման, ներդրումների, զբաղվածության մակարդակի, տնտեսությունում շրջանառվող «փողի» և տոկոսադրույքի միջև առկա կապը:


Պետության տնտեսական քաղաքականության գնահատման կարևոր ցուցանիշ է *տնտեսական աճը*, ինչը որոշակի ժամանակահատվածում (սովորաբար մեկ տարում) տնտեսական ապրանքների և ծառայությունների արտադրության աճն է նախորդ ժամանակաշրջանի համեմատ: Տնտեսական աճի ապահովումն ու աճի տեմպի խթանումը հատկապես առաջնային են դառնում ճգնաժամերին հաջորդող փուլերում, որտեղ կարևորվում է նաև պետության ընտրած աճի քաղաքականության մոդելը:

Տնտեսագիտության մեջ տարբերակվում են մակրոտնտեսական հավասարակշռությունը բնութագրող մի շարք տեսություններ (օրինակ՝ դասական *laissez-faire*²-ի վրա հիմնված և քեյնսյան³ մոդելները), որոնք հաճախ ներհակ են միմյանց տնտեսական աճի անհրաժեշտ նախադրյալների ընտրությամբ և դրանց տրված կարևորությամբ: Պետք է նկատել, որ տնտեսական աճը ոչ միշտ է պայմանավորված միայն արտադրական, օրենսդրական և քաղաքական գործոններով, այլ նաև մի շարք հասարակական գործոններով, ինչպիսին, օրինակ, մարդկային ներուժն է, ինչի համար էլ տնտեսության վերլուծությունն ու գնահատումն առավել նպատակահարմար է կատարել տնտեսական աճը բնութագրող տարաբնույթ ցուցանիշների համադրման համատեքստում:

Հաճախակի կիրառելի ցուցանիշներից են *համախառն ներքին արդյունքը* (ՀՆԱ, անգլ.՝ *gross domestic product, GDP*), *համախառն ազգային արդյունքը* (ՀԱԱ, անգլ.՝ *gross national product, GNP*), *համախառն ազգային եկամուտը* (ՀԱԵ, անգլ.՝ *gross national income, GNI*) կամ դրանց՝ բնակչության մեկ շնչի հաշվով արժեքը և աճը որոշակի ժամանակահատվածում, ինչպես նաև *տնտեսական ակտիվության ցուցանիշը* (*economic activity index*), *մարդկային կապիտալի* (*human capital index*) և *մարդկային ներուժի զարգացման* (*human development index*) *ինդեքսները*: Կարևոր է իմանալ ՀՆԱ, ՀԱԱ և ՀԱԵ ցուցանիշների բովանդակային տարբերությունները, որոնց սահմանումները տրված են Աղյուսակ 1-ում:

² Չմիջամտելու սկզբունք, համաձայն որի՝ շուկաներին հատուկ է ինքնակարգավորման մեխանիզմը:

³ Ըստ Ջոն Քեյնսի տեսության՝ պետական միջամտության որոշակի աստիճանը տնտեսական գործընթացներին անխուսափելի է, քանի որ շուկաները ոչ միշտ են ունակ ինքնակարգավորվելու:




Աղյուսակ 1. ՀՆԱ, ՀԱԱ և ՀԱԵ սահմանումները

Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)

Ամբողջական ծախսեր = ՀՆԱ = ամբողջական եկամուտ

Մակրոտնտեսական գլխավոր բնութագրիչներից մեկը **համախառն ներքին արդյունքն** (ՀՆԱ) է, որը ցույց է տալիս որոշակի ժամանակահատվածում (սովորաբար մեկ տարում) տվյալ երկրի սահմաններում արտադրված վերջնական ապրանքների և ծառայությունների ամբողջական շուկայական արժեքների գումարը (առանց միջանկյալ արտադրանքի արժեքի)՝ նախատեսված վերջնական սպառման, կուտակման և զուտ արտահանման⁴ համար: ՀՆԱ-ն դիտարկվում է որպես ազգային արդյունքի արտադրության գործընթացում առաջացած **ծախսերի հանրագումար** և միաժամանակ ազգային արդյունքի արտադրությամբ ստեղծված **ամբողջական եկամուտ**՝

⁴ Արտահանման և ներմուծման տարբերությունը, որը դրական է, եթե արտահանումը գերազանցում է ներմուծումը, և բացասական՝ հակառակ դեպքում:



Գծապատկեր 1. Ազգային եկամտի ձևավորման մոդելը

ՀՆԱ տեսակներն ու հաշվարկման եղանակները

Սահմանվում է համախառն ներքին արդյունքի երեք տեսակ՝ **անվանական, իրական և ներուժային** (տե՛ս Աղյուսակ 2):


Անվանական ՀՆԱ	Հաշվարկվում է ընթացիկ տարվա գործող միջին գներով, որոնք, կախված մեթոդաբանությունից, հաշվարկվում են ամսական կամ եռամսյակային կտրվածքով:
Իրական ՀՆԱ	Թողարկված արտադրանքի փաստացի ծավալն է՝ հաշվարկված որևէ բազային տարվա գնով, որը կամայականորեն ընդունվում է որպես հիմք՝ գործող գնի հետ համեմատելու համար:
Ներուժային ՀՆԱ	Երկրի արտադրական ռեսուրսների օգտագործման միջին լարվածության և լիարժեք զբաղվածության պայմաններում արտադրելի ապրանքների և ծառայությունների ամբողջական արժեքը:

Աղյուսակ 2. ՀՆԱ տեսակները

Համախառն ներքին արդյունքը կարող է հաշվարկվել երեք՝ **ավելացված արժեքի** (արտադրական մեթոդ), **եկամուտների** (բաշխման մեթոդ) և **ծախսերի** (վերջնական օգտագործման մեթոդ)

եղանակով: Ամենատարածվածը *ծախսերի* մեթոդն է, որը հայտնի է նաև որպես *մակրոտնտեսական գլխավոր հավասարում* (տե՛ս հաջորդ բաժնում):

ՀՆԱ կառուցվածքն ու դրա կարևորությունը



Գծապատկեր 2. ՀՆԱ կառուցվածքն ըստ ծախսերի մեթոդի

ՀՆԱ-ի հաշվարկման ամենաընդգրկուն մոտեցումը վերջնական օգտագործման, այսինքն՝ *ծախսերի* մեթոդն է, որի պարագայում ՀՆԱ-ն ձևավորվում է իբրև *մասնավոր սպառման, համախառն ներդրումների, պետական ծախսումների և զուտ արտահանման* գումար.

$$\begin{aligned} \text{ՀՆԱ}(Y) &= \text{սպառում}(C) + \text{համախառն ներդրումներ}(I) + \text{պետական} \\ &\quad \text{ծախսումներ}(G) + \text{զուտ արտահանում}(NX), \\ \text{որտեղ } NX &= \text{արտահանում}(X) - \text{ներմուծում}(M) \end{aligned}$$

Սպառումը (C) ձևավորվում է մասնավոր հատվածի սպառողական ծախսերից, որոնք ներառում են կարճաժամկետ և երկարաժամկետ սպառման ապրանքների և ծառայությունների ձեռքբերում, օրինակ՝ սննդամթերք, հագուստ, կոմունալ ծառայություններ և այլն: *Համախառն ներդրում (I)* է համարվում արտադրության նոր միջոցների ձեռքբերումը (սարքավորումներ, շինություններ, բնակավայրի գնում, մեքենաներ), որը չի ներառում ֆինանսական գործիքներում արված ներդրումները: ՀՆԱ-ում ընդգրկվող *պետական ծախսումները (G)* պետության և տեղական ինքնակառավարման մարմինների կատարած *պետական գնումներն* են, օրինակ՝ գույքի ձեռքբերում, կառուցապատման աշխատանքներ, պետծառայողների աշխատավարձեր և այլն: ՀՆԱ-ի հաշվարկման մեջ նկատի չեն առնվում պետական ծախսումների մյուս երկու բաղադրիչները՝ տրանսֆերային հատկացումներն ու պետական պարտքի գծով տոկոսային վճարումները: *Ջուտ արտահանումը (NX)* տվյալ երկրից ապրանքների և ծառայությունների արտահանման ու դրանց ներմուծման արժեքների տարբերությունն է:

ՀՆԱ-ի վերլուծությունը հնարավորություն է տալիս հասկանալու պետության որդեգրելիք հարկաբյուջետային (ֆիսկալ) քաղաքականության ուղղվածությունն ու նպատակները: Այն ներառում է կառավարության կողմից իրականացվող այն միջոցառումների ամբողջությունը, որը

ծախսումների և հարկերի փոփոխությունների⁵ միջոցով ծառայում է մակրոտնտեսական կայունության ապահովմանը: ՀՆԱ կառուցվածքային փոփոխությունների և դինամիկայի ուսումնասիրությունն ուղղորդիչ դեր կարող է կատարել նաև կենտրոնական բանկերի համար տվյալ մակրոտնտեսական իրավիճակին համահունչ դրամավարկային քաղաքականության (կրճատողական⁶ կամ փողի զանգվածի ընդլայնման⁷) ընտրության հարցում: Բացի դրանից՝ ազգային եկամտի և արտադրանքի հաշիվները, որոնք ՀՆԱ չափման հիմք են, թույլ են տալիս կանխատեսել այնպիսի էկզոգեն⁸ և էնդոգեն⁹ փոփոխականների ազդեցությունը տնտեսության վրա, ինչպիսիք են, օրինակ, նավթի գնի տատանումը, պետական հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության բաղկացուցիչ տարրերի փոփոխությունը և այլն:

Չնայած իր կարևորությանը՝ ՀՆԱ ցուցանիշը գերծ չէ նաև որոշ սահմանափակումներից: Օրինակ՝ այն չի արտացոլում տնտեսական աճի կայունության կամ բնակչության մեջ եկամուտների բաշխվածության համաչափության աստիճանը, չի ներառում ոչ շուկայական գործարքները և արտաքին բացասական ազդեցությունները՝ կապված ազգային արդյունքի արտադրման գործընթացի հետ:

Այդուհանդերձ, ՀՆԱ-ն շարունակում է մնալ մակրոտնտեսական վերլուծության հիմքում ընկած կարևորագույն բաղադրիչներից մեկը:

Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի կիրառումը

$$\text{Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ} = \frac{\text{Համախառն ներքին արդյունք}}{\text{Բնակչության թիվ}}$$

Ինչ վերաբերում է տարբեր երկրների կենսամակարդակների համեմատությանը, առավել նպատակահարմար է *մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի* կիրառումը, որը հաշվի է առնում երկրի բնակչության թիվը՝ համեմատելի դարձնելով ՀՆԱ ցուցանիշները:

Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ (անգլ.՝ *GDP per capita*) արժեքը հաշվարկվում է համախառն ներքին արդյունքը բնակչության թվաքանակին բաժանելով: Մակրոտնտեսական վերլուծություններում առանցքային է ՀՆԱ աճի և մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշների համադրումը, քանի որ տնտեսության բացարձակ մեծությունը ոչ միշտ է ենթադրում տնտեսական բարենպաստ իրավիճակ: Օրինակ՝ 2018 թ. դրությամբ Հնդկաստանն անվանական ՀՆԱ-ով աշխարհի 7-րդ ամենամեծ տնտեսությունն է և 3-րդ խոշորագույնը՝ ըստ գնողունակության համարժեքության¹⁰ հիմամբ հաշվարկված ՀՆԱ-ի (PPP): Սակայն մեկ շնչի հաշվով ՀՆԱ (անվանական) ցուցանիշով այն զբաղեցնում է 139-րդ տեղը և 122-րդը՝ ըստ գնողունակության համարժեքության (PPP): Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի սահմանումից բխում է նաև, որ այն երկրները, որոնց բնակչությունն աճման միտում ունի, բնակչության մեկ շնչի հաշվով ավելի ցածր ՀՆԱ ցուցանիշ կարող են ունենալ, եթե ՀՆԱ աճի տեմպը զիջի բնակչության աճի տեմպին:

⁵ Հարկաբյուջետային կրճատողական քաղաքականության դեպքում՝ հարկերի ավելացում և/կամ պետական ծախսերի կրճատում, ընդլայնողական քաղաքականության դեպքում՝ հարկերի կրճատում և/կամ պետական ծախսերի ավելացում:

⁶ Ենթադրում է փողի առաջարկի նվազեցում տոկոսադրույքի բարձրացմամբ, որը գործադրվում է գնաճի դեմ պայքարելու համար:

⁷ Ենթադրում է համախառն պահանջարկի խթանում տոկոսադրույքի իջեցմամբ, որը գործադրվում է ռեցեսիոն ճնշումների դեմ պայքարելու համար:

⁸ Մակրոտնտեսական փոփոխություններ, որոնք կատարվում են տնտեսական մոդելից դուրս:

⁹ Մակրոտնտեսական փոփոխություններ, որոնք կատարվում են տնտեսական մոդելի ներսում:

¹⁰ Ըստ գնողունակության համարժեքության տեսության՝ ապրանքների միևնույն համախումբը (արտահայտված միևնույն արժույթով) երկարաժամկետ կտրվածքով միևնույն գինը պետք է ունենա երկու տարբեր երկրներում:

Թեպետ մեկ շնչի հաշվով հաշվարկված ՀՆԱ-ն ավելի լավ ցուցանիշ է համարվում համադրելիության և երկրների կենսամակարդակների համեմատության տեսանկյունից, կարևոր է հաշվի առնել, որ այն նույնպես հստակորեն չի արտացոլում տվյալ երկրի ներսում եկամտի բաշխվածությունը:

ՀՆԱ ինդեքս-դեֆլատորը

ՀՆԱ ինդեքս-դեֆլատորն (անգլ.՝ *GDP deflator*) անվանական և իրական ՀՆԱ-ների քանորդն է, որը ցույց է տալիս տվյալ տարում միավոր ապրանքի կամ ծառայության գնի փոփոխությունը բազային տարվա նկատմամբ: Ենթադրենք՝ տնտեսությունում արտադրվում է միայն մեկ տեսակի ապրանք՝ ցորեն: Դիցուք՝ տվյալ տարվա անվանական ՀՆԱ-ն կազմել է 80000 ՀՀ դրամ, իսկ իրական ՀՆԱ-ն (այդ տարում արտադրված ցորենի քանակը՝ բազմապատկած որևէ բազային տարվա գնով)՝ 100000 ՀՀ դրամ: Այս դեպքում ՀՆԱ ինդեքս-դեֆլատորի արժեքը կլինի¹¹՝

$$\left(\frac{100,000}{80,000}\right) * 100\% = 125,$$

ինչը նշանակում է, որ գների ընդհանուր մակարդակը բազային տարվա համեմատ աճել է 25 %-ով: Գործնականում ՀՆԱ դեֆլատորը չափվում է **սպառողական գների ինդեքսի** (ՄԳԻ, անգլ.՝ *Consumer Price Index, CPI*) փոփոխությամբ (տե՛ս 3.2):

$$\text{ՀՆԱ դեֆլատոր} = \frac{\text{Անվանական ՀՆԱ}}{\text{Իրական ՀՆԱ}}$$

Ի՞նչ է սպառողական զամբյուղը

Սպառողական զամբյուղը (անգլ.՝ *basket of goods*) պարենային և ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների ամբողջությունն է, որն արտացոլում է մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ սննդային և այլ ռեսուրսների նվազագույն քանակը՝ սահմանված միջազգայնորեն ընդունված ֆիզիոլոգիական, առողջապահական և սոցիալական նորմատիվներով: Սպառողական զամբյուղը հաշվարկվում է Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից՝ հիմնվելով Առողջապահության նախարարության տրամադրած տվյալների վրա: Զամբյուղում ներառվող ապրանքները պարբերաբար ճշգրտվում են, որպեսզի հաշվի առնվեն բնակչության սպառողական սովորությունների փոփոխությունները: Սպառողական զամբյուղը կիրառվում է **սպառողական գների ինդեքսի** հաշվարկման համար՝ նաև գնաճին հետևելու գործիք ծառայելով տվյալ շուկայի կամ երկրի ներսում:

Ի՞նչ է սպառողական գների ինդեքսը

$$\text{ՄԳԻ} = \frac{\text{ընթացիկ տարվա սպառողական զամբյուղի արժեք}}{\text{բազիսային տարվա սպառողական զամբյուղի արժեք}}$$

Սպառողական գների ինդեքսը ցույց է տալիս սպառողական զամբյուղում ներառված ապրանքների և ծառայությունների (օրինակ՝ սնունդ, տրանսպորտ, բժշկական օգնություն) գնային փոփոխությունների միջին կշռված արժեքը: Դիցուք՝ որևէ տնտեսության սպառողական զամբյուղը սննդի, վառելիքի, հագուստի և կրթության ծախսերին համարժեք գումար է՝ համամասնական սպառողների կողմից յուրաքանչյուր ապրանքին տրված կարևորությամբ:

¹¹ ՀՆԱ դեֆլատորի հաշվարկը, որպես կանոն, հիմնվում է *Պաաշեի* մեթոդի վրա, որը հաշվի է առնում ընթացիկ ժամանակահատվածի արտադրանքի կշիռը:

Ապրանքատեսակ	Կշիռ (%)	Արժեք (ՀՀ դրամ)	
		2018 թ.	2017 թ.
Մնունդ	40 %	20,000	18,000
Վառելիք	20 %	8,000	6,000
Հագուստ	20 %	6,000	5,000
Կրթություն	20 %	28,000	30,000

Այս դեպքում սպառողական գների ինդեքսը հավասար է 2018 և 2017 թվականների սպառողական գամբյուղների արժեքների քանորդին¹²՝


$$ՄԳԻ = \frac{0.4 * 20,000 + 0.2 * 8,000 + 0.2 * 6,000 + 0.2 * 28,000}{0.4 * 18,000 + 0.2 * 6,000 + 0.2 * 5,000 + 0.2 * 30,000} * 100 \% = \frac{16,400}{15,400} * 100\% = 106.5 \text{ n\%}$$

Սա նշանակում է, որ ընթացիկ ժամանակահատվածի սպառողական գներն աճել են 6.5 %-ով: Սպառողական գների ինդեքսի փոփոխությունը կարևոր է ամսական, եռամսյակային և տարեկան կտրվածքներով ընդհանուր գնային մակարդակի փոփոխությունը գնահատելու համար: Ի տարբերություն ՀՆԱ դեֆլյատորի՝ ՄԳԻ-ն ներառում է միայն սպառողների կողմից գնված ապրանքներն ու ծառայությունները, այդ թվում նաև՝ ներմուծված արտադրանքը:

3.2.2. Միկրոտնտեսական հասկացություններ

Միկրոտնտեսագիտությունը զբաղվում է շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների՝ սպառողների և արտադրողների հիմնական խնդիրների ուսումնասիրությամբ:

Պահանջարկ և առաջարկ




Գծապատկեր 3. Միկրոտնտեսագիտության մեխանիզմը

¹² ՄԳԻ-ի հաշվարկը, որպես կանոն, հիմնվում է *Հասպեյրեսի* մեթոդի վրա, որը հաշվի է առնում բազային տարվա արտադրանքի կշիռը:

Շուկայական մեխանիզմի հիմքում ընկած է տնտեսվարող սուբյեկտների, այն է՝ գնորդների և վաճառողների փոխկապակցվածությունը, ինչը հիմք է ծառայում շուկայական **առաջարկի** ու **պահանջարկի** ձևավորմանը:

Պահանջարկը ապրանքի կամ ծառայության այն քանակությունն է, որը գնորդը պատրաստակամ է և կարող է գնել առկա գներից յուրաքանչյուրով: Շուկայում հասանելի յուրաքանչյուր գնին համապատասխան պահանջարկների գումարը կոչվում է **շուկայական պահանջարկ**: Պահանջարկը կարող է փոփոխվել մի շարք գնային և ոչ գնային գործոնների պատճառով, ինչպիսիք են, օրինակ, գնորդների եկամուտները, քանակը և նախասիրությունները, այլ ապրանքների գները, ակնկալվող գներն ու եկամուտները և այլն:

Առաջարկը ապրանքի կամ ծառայության այն քանակությունն է շուկայում, որն արտադրողը կարող է առաջարկել տրված գներից յուրաքանչյուրով: Բոլոր արտադրողների կողմից առաջարկվող քանակությունների ամբողջությունը ձևավորում է **շուկայական պահանջարկ**: Առաջարկի մեծությունը կախված է առաջարկի թե՛ գնային, թե՛ ոչ գնային գործոններից (ռեսուրսների գինը, տեխնոլոգիան, արտադրողների քանակը, հարկերը, ապագա սպասելիքները կամ այլ ապրանքների գները):



Գծապատկեր 4. Շուկայական հավասարակշռություն

Երբ շուկայում պահանջարկն ու առաջարկը հավասարվում են, առաջանում է **հավասարակշիռ վիճակ**, իսկ այն գինը, որի պարագայում պահանջարկն ու առաջարկը հավասարվում են, տրամաբանորեն կոչվում է **հավասարակշիռ գին**:

Տնտեսական մրցակցություն: Կատարյալ և ոչ կատարյալ մրցակցություն

Տնտեսագիտության մեջ սահմանվում են մրցակցության **կատարյալ** և **ոչ կատարյալ** ձևերը:

Կատարյալ մրցակցության պարագայում շուկայում գործում են իրարից անկախ մեծաթիվ ձեռնարկություններ, որոնք արտադրում են միևնույն ապրանքը, և որտեղ չկան շուկա մուտք գործելու խոչընդոտներ այլ ձեռնարկությունների համար:

Ոչ կատարյալ մրցակցության շարքին են դասվում մենաշնորհային մրցակցությունը, մենաշնորհները, օլիգոպոլիան, մոնոպսոնիան, օլիգոպսոնիան: Այս դեպքերում արտադրվում են տարասեռ¹³ ապրանքներ, և շուկայական մեխանիզմի գլխավոր դերակատարները՝ գնորդներն ու

¹³ Օժտված այնպիսի հատկանիշներով, որոնք էապես տարբերում են տվյալ ապրանքները միմյանցից, ինչն էլ դժվարացնում է մեկ արտադրանքի փոխարինումը մյուսով:

վաճառողները, կարող են իրենց ազդեցությունն ունենալ շուկայական գնի ձևավորման վրա, ինչը հնարավոր չէ կատարյալ մրցակցության պարագայում:

Մենաշնորհներ և օլիգոպոլիս

Մենաշնորհը շուկայի գործառնության ձև է, որի դեպքում մեկ վաճառողի առաջարկած արտադրանքը չունի փոխարինող, և կան արտադրությամբ զբաղվող այլ սուբյեկտների մուտքը դեպի շուկա սահմանափակող արգելքներ: Առանձնացվում են **բնական մենաշնորհները**, որտեղ մեկ ձեռնարկությունը (բացառիկ հումքի, տեխնոլոգիայի կամ այլ գործոնների շնորհիվ) կարող է ապահովել շուկայի ամբողջ պահանջարկը համեմատաբար առավել ցածր ծախսերով, քան հնարավոր կլինեք շուկայում մի քանի ընկերությունների առկայության դեպքում: Օրինակ՝ երկրի ջրամատակարարումը չափազանց բարձր ֆիքսված ծախսերի պատճառով սովորաբար կազմակերպվում է բնական մենաշնորհի պայմաններում:

Օլիգոպոլիսն ոչ կատարյալ մրցակցության ձև է, որի պարագայում շուկայում առկա են թե՛ միատեսակ և թե՛ բազմատեսակ ապրանքներ արտադրող փոքրաթիվ ընկերություններ:

Աշխատանքային շուկա և աշխատուժ: Զբաղվածություն և գործազրկություն

Կայուն տնտեսության կարևորագույն բաղադրիչներից է **աշխատուժը**, որն աշխատունակ տարիքի տնտեսապես ակտիվ բնակչության՝ զբաղվածների և գործազուրկների ընդհանուր թիվն է: Զբաղվածության բարձր մակարդակի առկայությունն առանցքային է տնտեսական արտաքին և ներքին ցնցումների հետնախորքում երկրում պատշաճ կենսամակարդակի պահպանման և առհասարակ տնտեսության շարունակական զարգացման համար:

Լրիվ զբաղվածությունը տնտեսական այն իրավիճակն է, որի դեպքում տնտեսության աշխատանքային բոլոր ռեսուրսները գործարկված են հնարավորինս արդյունավետ կերպով: Հատկանշական է, որ լրիվ զբաղվածությունը չի նշանակում, թե տնտեսությունում գործազրկությունը զրոյական մակարդակի է, քանի որ այն հաճախ կամավոր բնույթ է կրում: Այս առումով կարևոր է հասկանալ գործազրկության տնտեսագիտական սահմանումը և տեսակները:

Գործազուրկ են համարվում տնտեսապես ակտիվ բնակչության՝ **աշխատուժի** մաս կազմող այն անձինք, որոնք ցանկանում են աշխատել և փնտրում են աշխատանք: Սահմանվում է գործազրկության մի քանի տեսակ՝ **ֆրիկցիոն, կառուցվածքային և ցիկլային: Ֆրիկցիոն** է համարվում այն գործազրկությունը, որն առաջանում է աշխատաշուկա նոր մուտք գործելու կամ աշխատանքը փոխելու հետ կապված սպասման արդյունքում: Ֆրիկցիոն գործազրկությունը բնորոշ է նաև աճող և կայուն տնտեսություններին և սովորաբար կրում է կարճատև բնույթ:

Կառուցվածքային է կոչվում գործազրկության այն ձևը, որը հետևանք է տնտեսությունում կատարվող կառուցվածքային փոփոխությունների և մի շարք արտաքին գործոնների (տեխնոլոգիական փոփոխություններ, մրցակցություն և պետական քաղաքականություն): Կառուցվածքային գործազրկության նվազեցման համար սովորաբար անհրաժեշտ են արմատական փոփոխություններ, հակառակ դեպքում այն կարող է երկարատև լինել և հանգեցնել գործազրկության բնական մակարդակի¹⁴ բարձրացման:

¹⁴ Տնտեսության մեջ երկարաժամկետ հատվածում առկա գործազրկության մակարդակն է լրիվ զբաղվածության պարագայում (Միլթոն Ֆրիդման, 1969 թ., Էդմունդ Ֆելփս, 1973 թ.):

Ցիկլային գործազրկությունը հետևանք է տնտեսության և բիզնեսի անկման, ինչը հանգեցնում է աշխատանքի հանդեպ նվազող պահանջարկի և գոյություն ունեցող առաջարկի միջև անհավասարակշռության:

3.2.3. Ներդրումային քաղաքականություն

Օտարերկրյա ներդրումներն ու դրանց կարևորությունը

Օտարերկրյա ուղղակի ներդրումն ընկերության կամ անհատի կողմից մեկ այլ երկրում կատարվող այն ներդրումն է, որը սովորաբար ենթադրում է բիզնեսի հիմնում կամ գործող բիզնես ակտիվների ձեռքբերում՝ հետապնդելով երկարաժամկետ շահ: Ուղղակի ներդրումները սովորաբար կատարվում են *բաժնետիրական կապիտալի, կուտակված շահույթի և այլ կապիտալի* միջոցով:



Գծապատկեր 5. Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգործության մեխանիզմը

Օտարերկրյա ներդրումները կարևոր դերակատարություն ունեն տնտեսական առաջընթացի խթանման գործում, հատկապես սուղ կապիտալի պայմաններում զարգացող երկրների համար: Դրանք ոչ միայն նպաստում են շուկայում մրցակցության ամրապնդմանը, աշխատատեղերի ստեղծմանը, միջազգային շուկաներ մուտք գործելու հնարավորությունների և ֆինանսավորման հասանելիության մեծացմանը, այլ նաև զարգացնում են գործարար միջավայրը՝ ի հայտ բերելով ժամանակակից բիզնես կառավարման նոր գաղափարներ և տեխնոլոգիաներ: Կարևոր է հաշվի առնել, սակայն, որ թե՛ օտարերկրյա ներդրումների առկայությունը, թե՛ դրանց արդյունավետությունը մեծապես կախված են մի շարք նախապայմաններից, այդ թվում՝ հյուրընկալող երկրի ինստիտուցիոնալ, իրավական, օրենսդրական և վարչաքաղաքական ենթակառուցվածքների որակից: Դրանց բացակայության պարագայում օտարերկրյա ներդրումների արդյունքում կատարված կապիտալի ներհոսքը հետագայում կարող է հանգեցնել կապիտալի երկարաժամկետ արտահոսքի՝ կապված տեղական շուկայի կառուցվածքի կամ օրենսդրական դաշտից բխող սահմանափակումների հետ:

Ներդրումային քաղաքականության հիմնական նպատակները և խնդիրները

ՀՀ կառավարության 2019 թ. ծրագրում կենտրոնական դեր ունի **ներդրումային քաղաքականությունը**: Այն ընդգծում է զբաղվածության խթանմանն ու արտահանման ծավալների

ընդլայնմանն ուղղված ներդրումային քաղաքականության որդեգրման կարևորությունը, ինչը պետք է տեղի ունենա ծրագրված կառուցվածքային բարեփոխումներին զուգահեռ: Ծրագրում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության ոլորտին՝ որպես տնտեսության զարգացման համար առանցքային ճյուղ բնական սուղ ռեսուրսների պայմաններում:

Օտարերկրյա ներդրումների ներգրավման տեսանկյունից կարևորվում է պետության և մասնավոր կազմակերպությունների իրավահարաբերությունների կարգավորմանը միտված ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը: Կառավարությունը նաև նպատակադրել է տրամադրել մինչև ներդրումային և հետներդրումային համալիր ծառայություններ ներդրողների ժամանակային և ֆինանսական ծախսերն էապես կրճատելու նպատակով: Կառավարության ծրագրում շեշտվում է նաև մտավոր սեփականության իրավունքների պաշտպանվածության բարձրացման ու համապատասխան մեխանիզմների մշակման անհրաժեշտությունը՝ որպես օտարերկրյա ներդրումների արդյունավետ ներգրավման մեկ այլ կարևոր նախապայման:

3.2.4. ՓՄՁ ոլորտի դերը զարգացող երկրներում

ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները

Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ, անգլ.՝ *Small and medium-sized enterprises, SMEs*)

դասակարգման չափորոշիչները սովորաբար սահմանվում են տվյալ երկրի (կամ տնտեսաքաղաքական միության) օրենսդրությամբ և տվյալ տնտեսության մասշտաբի համամասնությամբ: 2011 թ. ՓՄՁ սուբյեկտների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դասակարգումը համապատասխանեցվեց Եվրոպական միությունում գործող սահմանմանը, որը հիմնված է աշխատակիցների թվաքանակի, տարեկան շրջանառության և ակտիվների հաշվեկշռային արժեքի վրա (տե՛ս Աղյուսակ 3-ում):

ՓՄՁ ոլորտի զարգացման ռազմավարությունն ու մարտահրավերները

Տնտեսվարող սուբյեկտներ	Աշխատակիցների քանակ	Տարեկան շրջանառություն	Ակտիվների հաշվեկշռային արժեք
<i>Հայաստան</i>			
Գերփոքր	<10 աշխատակից	<100 մլն ՀՀ դրամ	<100 մլն ՀՀ դրամ
Փոքր	<50 աշխատակից	<500 մլն ՀՀ դրամ	<500 մլն ՀՀ դրամ
Միջին	<250 աշխատակից	<1500 մլն ՀՀ դրամ	<1000 մլն ՀՀ դրամ
<i>Եվրոպական միություն</i>			
Գերփոքր	<10 աշխատակից	<2 մլն եվրո	<2 մլն եվրո
Փոքր	<50 աշխատակից	<10 մլն եվրո	<10 մլն եվրո
Միջին	<250 աշխատակից	<50 մլն եվրո	<43 մլն եվրո

Աղյուսակ 3. ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները ՀՀ-ում և ԵՄ-ում

ՓՄՁ սուբյեկտները համարվում են տնտեսության գլխավոր դերակատարներ, քանի որ դրանք նպաստում են կայուն և ընդգրկուն տնտեսական աճի, արդյունաբերականացման, նորարարությունների զարգացման, տնտեսության արդյունավետ դիվերսիֆիկացման, ինչպես նաև եկամտի հավասարաչափ բաշխման գործընթացներին: Այդ իսկ պատճառով ՓՄՁ ոլորտի կայուն զարգացումը շարունակաբար եղել է ՀՀ կառավարության տնտեսաքաղաքական ռազմավարության առաջնահերթությունների շարքում: Կարևոր է փաստել, որ ներկայումս մշակվող պետական աջակցության ծրագրերի հիմնական նպատակը ոչ միայն ՓՄՁ ոլորտի քանակական ընդլայնումն է, այլև գլխավորապես ոլորտի մրցունակության բարձրացումն ի հաշիվ գիտելիքի, փորձառության և որակական զարգացման: Ոլորտում առկա մարտահրավերների վերլուծությունը հուշում է

պետական քաղաքականության մեջ ՓՄՁ սուբյեկտների՝ տեղական և միջազգային շուկաներում արդյունավետ գործունեության ապահովմանն ուղղված քայլերի ընդգրկման անհրաժեշտության մասին: Առաջնային նպատակներից են կազմակերպությունների արդյունավետ կառավարման մասին գիտելիքների և փորձառության փոխանցումը, ֆինանսական միջոցների հասանելիության բարձրացումը, ինչպես նաև հարկային ու մաքսային դյուրացված համակարգերի և մասնավոր հատվածի հետ գործընկերության հարթակների մշակումը:

3.2.5. ՀԿ-ների դերը և ներգրավվածությունը տնտեսության զարգացման գործում

Հասարակական կազմակերպությունները (ՀԿ, անգլ.՝ Non-governmental organizations, NGOs) կարևորագույն նշանակություն ունեն հատկապես զարգացող երկրների սոցիալ-տնտեսական կյանքի առաջընթացի գործում, որտեղ պետությունների կարողություններն ու եկամուտները հաճախ սահմանափակ են: ՀԿ-ների միջոցով հնարավոր է նպաստել համայնքների կարողությունների ու հմտությունների զարգացմանը ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի, համայնքային գործունեության արդյունավետ պլանավորման, ինչպես նաև կատարվող աշխատանքների ճշգրիտ գնահատման և արդյունքների համապարփակ վերլուծության շնորհիվ:

ՀԿ-ները կարող են խթանել համայնքի ներկայացուցիչների մասնակցությունը համայնքային այն կարևոր նախագծերում, որոնք միտված են բարելավելու հասարակության կենսամակարդակն ու կյանքի որակը: Այդուհանդերձ, ՀԿ-ները հաճախ հանդես են գալիս իբրև բացառապես այս կամ այն ծառայությունը մատուցող կազմակերպություններ՝ ստվերելով քաղաքացիական հասարակության շարժիչ օղակի իրենց դերը: Որպեսզի ՀԿ-ների ներուժը լիովին բանեցվի հոգուտ համայնքների և հանրության, կարևոր է դրանց կողմից քաղաքացիական երկխոսությունների և բանակցությունների կազմակերպումը՝ միտված հավաքական ակտիվների ու կարողությունների զարգացմանը:

Գրականության ցանկ

Բանկեր Ն., Հուլմե Դ. (2012 թ.), *ՀԿ-ների և քաղաքացիական հասարակության դերը զարգացման և աղքատության հաղթահարման գործում*, Մանչեսթեր, Զարգացման քաղաքականության և կառավարման ինստիտուտ (IDPM):
ՀՀ կառավարություն (2019), *ՀՀ կառավարության ծրագիր*, Երևան:
Մենքյու Գ., (2010 թ.), *Մակրոէկոնոմիկա*, 7-րդ հրատարակություն, Worth Publishers:
Մենքյու Գ., (2002 թ.), *Միկրոէկոնոմիկայի սկզբունքները*, Տորոնտո, Նելսոն Թոմսոնի ուսուցում:
Սարգսյան Հ., Մարգարյան Հ. (2017 թ.), *Տնտեսագիտության տեսություն*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն:
Վիճակագրական բառարան, *Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե*:
Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպություն (ՏՀՀԿ), (2017 թ.), *ՓՄՁ ոլորտի դերի ընդլայնումը զրոբալացված և թվայնացված տնտեսության մեջ*, Փարիզ:
Ֆելլաու Է., Ալյան Ա., Արքիբալդ Գ. (1973 թ.), *Զբաղվածության միկրոտնտեսական հիմունքները և գնաճի տեսությունը*, Նյու Յորք:
Ֆրիդման Մ., Հելլեր Վ. (1969թ.), *Դրամական և գանձարանային քաղաքականություն*, Նյու Յորք:

3. Տարածաշրջանի երկրների տնտեսական համագործակցությունը որպես երկրների ներուժի զարգացման միջոց. պետական պարտք **Էյլանորա Մաթևոսյան, Աշոտ Մարկոսյան, Վահագն Խաչատրյան**

Նախաբան

Տնտեսական ինտեգրման խորացման և տնտեսության համաշխարհայնացման արդի դարաշրջանում վճռական նշանակություն է ստանում ոչ միայն առանձին երկրների տնտեսությունների միկրո- և մակրոմակարդակներում իրականացվող քաղաքականությունը, այլ նաև աշխարհատնտեսագիտության սկզբունքները և մոտեցումները հաշվի առնելը: Նշված համատեքստում, հատկապես փոքր և բաց տնտեսություն ունեցող երկրների համար, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, տարածաշրջանային տնտեսական համագործակցությունը դառնում է տնտեսական աճի վճռական գործոն և երկրի ներուժի բացահայտման միջոց: Այդ մասին են վկայում Հայաստանի Հանրապետության վերջին տարիների սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշները: Երկրների միջև համագործակցությունը ենթադրում է նաև արտաքին փոխառությունների տրամադրում, որոնք հիմնականում ծառայում են արտահանման ավելացման, զբաղվածության մակարդակի բարձրացման և, ի վերջո, տնտեսական աճի տեմպերի արագացման համար: Ակներև է նաև, որ երկարատև ժամանակահատվածում տարածաշրջանի առանձին երկրների միջև տեղ գտած հակասությունները դժվարացնում և խոչընդոտում են դրանց տնտեսական համագործակցությունը՝ հանգեցնելով բազմակողմ վնասների, ինչպես նաև այդ երկրների տնտեսական հնարավորությունների թերօգտագործման: Նման պայմաններում էական է դառնում տարածաշրջանի առանձին երկրների բացարձակ և համեմատական առավելությունների հիման վրա դրանց մասնագիտացման խորացման հիմնական ուղղությունների բացահայտումը:

- Մեզատնտեսագիտություն
- Սոցիալ-տնտեսական ցուցանիշներ. ՀՀ հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները
- Արտաքին պետական պարտք և դրա կառավարումը
- Տնտեսական ինտեգրում. այսրկովկասյան և տարածաշրջանի մյուս երկրների տնտեսական ինտեգրվածության մակարդակը
- Համագործակցության բացակայության պատճառով ՀՀ և այսրկովկասյան ու տարածաշրջանի մյուս երկրների կրած տնտեսական կորուստները
- Արցախի Հանրապետության տնտեսության մասնագիտացման խորացման հիմնական ուղղությունները:

3.1. Մեզատնտեսագիտություն

Արդի տնտեսագիտությունը բաժանվում է երեք ճյուղերի՝ միկրոտնտեսագիտություն, մակրոտնտեսագիտություն և մեզատնտեսագիտություն: Ժամանակագրորեն առաջանալով հենց նշված հաջորդականությամբ՝ դրանցից յուրաքանչյուրը կազմավորվել է ըստ իր ժամանակի պահանջների և արտադրական առանձնահատկությունների՝ փորձելով լուծումներ գտնել ի հայտ եկող կազմակերպչական խնդիրներին և նոր միջոցներ որոնելով շուկայի ընդլայնման համար:

XVII դարի Անգլիայում, որն այդ ժամանակի առաջատար երկիրն էր, սկիզբ առավ Արդյունաբերական հեղափոխությունը. ձեռքի աշխատանքին փոխարինեցին մեքենաները (մեծ մասամբ շոգեմեքենաները)՝ ի հայտ բերելով առաջին արտադրություններն ու ֆաբրիկաները, որոնց նպատակը գերազանցապես գյուղատնտեսական (անասնաբուծական կամ բուսաբուծական) արտադրանքի վերամշակումն էր: Զուգահեռաբար աճեցին բնակչության եկամուտներն ու թվաքանակը, և դրա պահանջմունքների բավարարումը դրվեց արդյունաբերական հիմքի վրա:

Բազմապիսի ապրանքներ արտադրող ֆաբրիկաների և արհեստանոցների թիվն օրեցօր ավելանում էր անձրինից հետո աճող սնկերի նման: Այդպես ձևավորվեցին և աշխարհով մեկ

տարածվեցին ժամանակակից ձեռնարկությունների ու կազմակերպությունների նախատիպերը: Սակայն դրանք կառավարելու և արտադրությունն արդյունավետ կերպով կազմակերպելու ու կարգավորելու համար տեսական հիմքի կարիք էր զգացվում: Ահա այս հարցերի լուծման նպատակով էլ ձևավորվեց միկրոտնտեսագիտությունը՝ նաև որոշակիորեն հիմք դնելով դրանց փիլիսոփայությանը: Միկրոտնտեսագիտությունը դարձավ ներկայիս տնտեսագիտական բուրգի հիմքը առնվազն այն պատճառով, որ մարդկության գոյության համար անհրաժեշտ բարիքները (ապրանքներն ու ծառայությունները) ստեղծվում են հենց ձեռնարկություններում՝ տնտեսության առաջնային բջիջներում:

Յուրաքանչյուր ազգային տնտեսություն էլ բաղկացած է բազմաթիվ և տարաբնույթ ձեռնարկություններից, որոնք միմյանց հետ ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական կապերի մեջ են և դրանցով ձևավորում են ազգային տնտեսական համակարգը: Այդ համակարգի հավասարակշիռ ու արդյունավետ զարգացման համար նույնպես անհրաժեշտ են գիտելիքներ առկա օրինաչափությունների մասին, ինչպիսիք են շրջանառվող փողի զանգվածի և բարիքների քանակի, բնակչության դրամական խնայողությունների և ներդրումների, վարձատրության և գների, աշխատանքի արդյունավետության և արտադրության ծավալի աճի տեմպերի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական այլ ցուցանիշների և գործընթացների միջև գործող կապերը: Դրանց և դրանց վրա ներազդելու միջոցների ուսումնասիրությամբ է զբաղվում մակրոտնտեսագիտությունը: Ժամանակակից տնտեսագիտության այս կարևոր բաժինը հաճախ անվանում են նաև «հայացք տնտեսությանը թռչնի թռիչքի բարձրությունից»: Այն սպառազինված է իր յուրահատուկ հասկացություններով և գործիքներով, որոնք լայնորեն կիրառվում են ցանկացած պետության տնտեսական քաղաքականության մեջ: Ավելին՝ այդ հասկացություններն ամեն օր հնչում են գրեթե բոլոր քաղաքացիների շուրթերից: Այսպես՝ *ներդրում, խնայողություն, արժեզրկում, զբաղվածություն, աճի տեմպ, կուտակում, համախառն ներքին արդյունք (ՀՆԱ), պետական եկամուտ (ՊԵ)* և նշված ոլորտին առնչվող մյուս տերմինները դարձել են առօրեական բառեր ոչ միայն տնտեսագետների, այլև ուրիշ զբաղմունք ունեցող միլիոնավոր մարդկանց համար:

Այսուամենայնիվ, մարդկային քաղաքակրթության զարգացմանը համընթաց խորանում է աշխատանքի հասարակական բաժանումը, ընդ որում ոչ միայն առանձին երկրների տնտեսությունների սահմաններում, այլև ողջ աշխարհում՝ նրա առանձին տարածաշրջանների և պետությունների միջև: Միջազգային առևտուրը լայն հնարավորություններ է ընձեռում պետություններին՝ հասանելի դարձնելով մյուս տնտեսությունների հարաբերական և բացարձակ առավելությունները. եթե մի պետություն առաջարկում է որևէ ապրանք ցածր գնով, ապա տնտեսապես ձեռնտու է այն ձեռք բերել նրանից և ոչ թե ինքնուրույն արտադրել ավելի բարձր գնով:

Արդյունքում երկրագնդով մեկ տեղի են ունենում արտադրության ռացիոնալացում և մասնագիտացում, որի շնորհիվ միավոր ռեսուրսից ստացվում է ավելի շատ արդյունք, ինչից էլ շահում են բոլորը: Հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ առանձին պետությունների և տարածաշրջանների միջև տնտեսական և գիտատեխնիկական կապերն էլ ավելի ամրացան, ձեռնարկությունների միջև հարաբերությունները համաձայնեցնելու և կարգավորելու անհրաժեշտություն առաջացավ այլևս ոչ թե պետական և ոչ անգամ տարածաշրջանային, այլ համաշխարհային մակարդակով: Այդ նպատակով ստեղծվեցին մի շարք միջազգային կազմակերպություններ (ՄԱԿ, Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամը և այլն), որոնք կարգավորում են ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական համաշխարհային համագործակցությունը: Ներկայումս արձարծվում է համաշխարհային կառավարման և այդ բնույթի այլ մարմիններ ստեղծելու, ինչպես նաև դրանք լրջագույն գործիքակազմով օժտելու հարցը: Բանն այն է, որ 2008 թ. սկիզբ առած համաշխարհային

ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառներից մեկը, ըստ մասնագետների¹⁵, ապրանքային, ֆինանսական և աշխատանքային համաշխարհային հոսքերի անկարգավորվածությունն էր, որի դրսևորումներից է այն, որ մի խումբ երկրներում կուտակվել է կապիտալը, իսկ մյուսներում՝ աշխատուժը, և այդպիսով տուժում են թե՛ առաջին և թե՛ մյուս խմբի երկրները (կամ դրանց միավորումները):

Վերոնշյալ համաշխարհային հարցերի ուսումնասիրության նպատակով տնտեսագիտության մեջ առանձնացվեց մի նոր ճյուղ ևս՝ ստանալով մեզատնտեսագիտություն անվանումը, որի հայերեն լավագույն համարժեքը, թերևս, «աշխարհատնտեսագիտություն» տերմինն է: Ի դեպ, աշխարհատնտեսագիտությունը մեկնաբանվում է նաև իբրև գիտություն, որի ուսումնասիրության առարկան են Երկրորդ աշխարհամարտից հետո ամերիկյան մենաշնորհների կողմից վարվող տնտեսական պատերազմը և դրա մեթոդները: Սակայն «աշխարհատնտեսություն» տերմինը շրջանառության մեջ է դրվել միայն 1980-ական թվականների վերջին՝ շնորհիվ ԱՄՆ-ի Ազգային անվտանգության խորհրդի և Պետական դեպարտամենտի խորհրդական Էդվարդ Լյուիվալի, ով առաջինը նշեց աշխարհաքաղաքականությունից աշխարհատնտեսագիտությանը անցնելու մասին¹⁶: Այլ կերպ ասած՝ աշխարհատնտեսությունը տնտեսական իրադրությունը դիտարկում է համաշխարհային իրողությունների տեսանկյունից և տնտեսավարողներին թույլ տալիս գնահատել միջազգային կապիտալի, ֆինանսական, հումքային և այլ հոսքերի ազդեցությունն իրենց գործունեության վրա: Այսպես, եթե 2000-2006 թթ. Չինաստանի ՀՆԱ-ում ներդրումների բաժինն աճել է՝ 35 %-ից հասնելով 43 %-ի, ապա նույն ժամանակահատվածում ներքին սպառումը նվազել է՝ 62 %-ից հասնելով 50 %-ի: Չինաստանի տնտեսական էքսպանսիան տեղի ունեցավ բացառապես ներդրումների և արտահանման, այլ ոչ թե բնակչության ներքին բարեկեցության աճի հաշվին, որի շնորհիվ ՀՆԱ-ի աճի ցուցանիշով Չինաստանը դարձել է առաջին, իսկ ՀՆԱ-ի մեծությամբ՝ ԱՄՆ-ից հետո երկրորդ երկիրը: Ուրեմն՝ աշխարհատնտեսության կիրառական խնդիրը պետության ռազմավարության մշակումն է, որի շնորհիվ այն կարող է «իր» տարածքում գտնվող տնտեսավարողների համար ապահովել լավագույն մրցակցային առավելություններն «օտար» տնտեսավարողի և տնտեսությունների նկատմամբ:

Մեզատնտեսական խնդիրներ առաջ բերեց նաև համայնավարական համակարգի և հատկապես դրա «միջնաբերդը» համարվող Խորհրդային Միության կազմալուծումը, քանի որ անհրաժեշտ դարձավ այդ համակարգն ինտեգրել համաշխարհային տնտեսությանը: Նախկին համայնավարական գրեթե բոլոր երկրները հայտարարեցին իրենց քաղաքական անկախության և շուկայական տնտեսությանն անցնելու մասին, և այդպես սկսվեց սոցիալիզմից կապիտալիզմին անցնելու երկար գործընթացը, որը շարունակվում է մինչ օրս: Անկասկած, նախկին պլանային կամ հրամայական տնտեսության փոխարինումը շուկայականով ժամանակի պահանջն էր: Այդ գործընթացքում առաջնային դերակատարում ունեցան նախևառաջ քաղաքական գործոնները, սակայն, մեր խորին համոզմամբ, վերջիններիս հիմքում էլ ընկած էին տնտեսական հանգամանքները: Համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու ընթացքում և առևտրատնտեսական հարաբերությունների ինտենսիվացմանը համընթաց պարզ դարձավ, որ համայնավարական տնտեսական համակարգը, կապիտալիստականի համեմատ, պարզապես անարդյունավետ էր:

¹⁵ Абел Аганбегян, Экономика России на распутье ... Выбор посткризисного пространства, Москва, Изд.-во: АСТ, 2010г., 379 с., Հարությունյան Վ., Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, 146 էջ, Հարությունյան Վ.Լ., Խաչատրյան Վ.Վ. Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 308 էջ:

¹⁶ Мировая экономика и международные экономические отношения: современное состояние, проблемы и основные тенденции развития. Учебное пособие. Под редакцией д-ра экон. наук, д-ра пед. наук, доц. Е.Д.Фроловой, д-ра экон. наук С.А.Лукьянова, Екатеринбург, 2016, с. 41.

Տնտեսագիտության երեք ճյուղերը փոխշաղկապված են և փոխադարձաբար լրացնում են մեկմեկու՝ այդպիսով դառնալով տնտեսագիտության հարստացման ներքին աղբյուրներ: Ուստի տնտեսական քաղաքականություն կամ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր մշակելիս ցանկացած երկրի կառավարություն պարտավոր է ոչ միայն հաշվի առնել, այլև լավագույնս օգտագործել արդի տնտեսագիտության ընձեռած հնարավորություններն ու առավելությունները: Հատկապես մեր հանրապետության նման փոքր և բաց տնտեսություն ունեցող երկրների առաջխաղացումը կախված է ոչ միայն միկրո և մակրոտնտեսական հմուտ կարգավորումներից, այլև աշխարհատնտեսական օրինաչափությունների և միտումների ճիշտ գնահատումից: Ավելին՝ բազմաթիվ մասնագետներ հավատացած են, որ զարգացող երկրների տնտեսական քաղաքականության արդյունավետությունը 70-80 %-ով պայմանավորված է աշխարհատնտեսությամբ¹⁷: Բանն այն է, որ փոքր բնակչություն և ցածր գնողունակություն ունեցող երկրների հաջողության բանալին արտաքին շուկաներում է, և միայն վերջիններիս պահանջներն ու պայմանները հաշվի առնելով է հնարավոր հասնել լուրջ սոցիալ-տնտեսական արդյունքների՝ մասնավորապես բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, ինչպես նաև տնտեսության մեջ գիտատեխնիկական նվաճումների ներդրմանը: Նույն կերպ էլ հաջողակ են այն ձեռնարկությունները, որոնք բավարարում են ոչ միայն ներքին, այլև արտաքին շուկայի պահանջները:

Տնտեսության համաշխարհայնացման հետևանքով ստեղծված միջպետական տնտեսական կապերը, շնորհիվ արտաքին առևտրի ընձեռած հնարավորությունների, դրական ազդեցություն են թողել համագործակցող երկրների տնտեսությունների վրա՝ նպաստելով վերջիններիս բարգավաճմանն ու աճի տեմպերի բարձրացմանը: Այսուհանդերձ, համաշխարհային տնտեսական ինտեգրվածության խորացումը և այն հանգամանքը, որ «բոլորը նույն նավակի մեջ են», ունեն նաև թերություններ և խոցելի կողմեր, ինչի վառ ապացույցն էր 2008 թ. կեսերին սկիզբ առած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որից չխուսափեց գրեթե ոչ մի երկիր:

Ճգնաժամին հաջորդած իրադարձությունները և դրանից դուրս գալու ձախողված փորձերը ևս տնտեսագիտության համար նոր խնդիրներ առաջացրին: Այլ կերպ ասած՝ առանձին երկրների մեկուսի փորձերը և իրենց տնտեսություններում կիրառված միկրո- և մակրոտնտեսագիտական միջոցները բավարար չեղան ճգնաժամի հետևանքները հաղթահարելու համար: Դա է նաև վկայում Եվրամիության երկրներում առաջացած պարտքի հիմնախնդիրը, որի լուծման ճանապարհը, թերևս, ջանքերի համատեղումը, միասնական ծրագրերի մշակումը և դրանց գործադրումն է անդամ բոլոր երկրներում: Այս առումով հետաքրքրական է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Բագրատյանի տեսակետը, ըստ որի՝ տնտեսագիտական ավանդական գիտելիքները, որոնք հենվում են միկրոտնտեսագիտության և մակրոտնտեսագիտության վրա, թույլ չեն տալիս հստակ ձևակերպել ազգային տնտեսությունների կայուն զարգացման համար անհրաժեշտ լուծումների հավաքակազմը: Տնտեսագիտության պատմության տեսանկյունից՝ առկա իրավիճակը հիշեցնում է անցյալ դարի 30-ական թվականները, երբ հանկարծ պարզվեց, որ տնտեսագիտություն, որպես այդպիսին, գոյություն չունի, այլ կան միկրոտնտեսագիտություն և մակրոտնտեսագիտություն: Այժմ խնդիրն այն է, որ տնտեսական գլոբալիզացիայի արդյունքում համաշխարհային պայմաններին է ենթարկվում ոչ միայն ապրանքների և ծառայությունների առաջարկի ու պահանջարկի հավասարակշռությունը, այլև համաշխարհային են դարձել ռեսուրսները (հողը, աշխատանքը, մարդկային և հումքային ռեսուրսները, կապիտալը, նորամուծությունները)՝ ըստ այդմ ձևավորելով նաև ռեսուրսների առաջարկի և պահանջարկի համաշխարհային (մեզատնտեսական) կորերը: Մարդիկ, ապրանքները, ծառայությունները և ռեսուրսները ավելի արագ և հեշտությամբ են հասնում պետական սահմանները և այդպիսով

¹⁷ Thomas.L.Friedman, The World Is Flat: A Brief History of the Twenty-first Century, New York, 2005, 488 pp., Ա.Խ.Մարկոսյան, Կ.Ա.Ներսիսյան, Դ.Ռ.Գալոյան, Է.Ն.Մաթևոսյան, Գլոբալ և տարածաշրջանային տնտեսական համագործակցության հիմնախնդիրները, Շուշի, ՇՏՀ հրատ., 2018, 320 էջ:

ձևավորում առաջարկի և պահանջարկի համաշխարհային հավասարակշռություն: Մակագների նվազումը որակապես նոր և աննախադեպ պայմաններ է ձևավորել երկրների միջև ռեսուրսների ազատ տեղաշարժի համար, որն էլ դրանց սահմանային արդյունքների համահարթման և հավասարակշռության անհրաժեշտություն է ստեղծել¹⁸: Երբ տեղական և համաշխարհային միջին սակագների տարբերությունն իջնում է 10 %-ից, ազգային (մակրոտնտեսական) միջավայրը «տարրալուծվում» է համաշխարհայինի մեջ:

Այսպիսով՝ մեգատնտեսագիտությունը տնտեսությունների համաշխարհայնացման և ինտեգրվածության խորացման պատճառով օբյեկտիվորեն առաջացած իրողություն է, որը ազգային կառավարություններն անտեսելու իրավունք չունեն և սոցիալ-տնտեսական քաղաքականությունը մշակելիս պետք է հաշվի առնեն:

3.2. Սոցիալ-տնտեսական ցուցանիշներ. ՀՀ հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները

Երկրների տնտեսության և հասարակության բնորոշման համար օգտագործվում են բազմազան ցուցանիշներ, որոնց աճի և նվազման միտումների միջոցով էլ արձանագրվում են այդ երկրների ձեռքբերումներն ու անհաջողությունները: Այդ ցուցանիշների թիվը հասնում է մի քանի հազարի, քանի որ հասարակության ու տնտեսության կառուցվածքը և դրանց առնչվող հարցերը բազմաբնույթ ու բազմաշերտ են: Հենց սոցիալ-տնտեսական ցուցանիշներ են պաշտոնական և վիճակագրական նյութերում օգտագործվողները, ընդ որում՝ սոցիալական ցուցանիշներն ավելի շատ վերաբերում են հասարակությանը, իսկ տնտեսականները՝ տնտեսության վիճակին: Այսուհանդերձ, վերջիններս նաև սոցիալ-տնտեսական բովանդակություն ունեն, քանի որ տնտեսության զարգացման հիմնական նպատակը հասարակության սոցիալական խնդիրների լուծումն է, ընդ որում՝ որքան զարգացած է տվյալ երկրի տնտեսությունը, այնքան մեծ են սոցիալական խնդիրների լուծման հնարավորություններն ու ռեսուրսները: Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ցուցանիշներին ներկայացվող մի շարք պահանջներից առաջնային են դրանց հավաստիությունն ու օբյեկտիվությունը, իսկ հասարակության յուրաքանչյուր անդամ այդ ցուցանիշներին տեղեկանալու և դրանց մասին պատկերացում կազմելու իրավունք ունի: Ավելին՝ հավաստի և իրականությանը համապատասխանող ցուցանիշների (թվական տվյալների) հիման վրա պետք է կազմվեն հետագա զարգացման ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ծրագրերը:

Այս բազմազան ցուցանիշներից են օգտվում նաև տարբեր ոլորտների մասնագետներ՝ կենտրոնանալով իրենց գործունեությանը վերաբերողների վրա. արդյունաբերության ոլորտի մասնագետներին գերազանցապես հետաքրքրում են արդյունաբերական ցուցանիշները, գյուղատնտեսներին՝ գյուղատնտեսականները և այսպես շարունակ: Եվ բնական է, որ առանձին ոլորտներին վերաբերող այսպիսի մանրամասնություններն ամեննին չեն հետաքրքրում «միջին» քաղաքացուն: Ահա այս պատճառով էլ պաշտոնական վիճակագրությունում առանձնացվում են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշները¹⁹ և դրանց ինդեքսները²⁰: Այդպես է վարվում նաև Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտեն (նախկինում՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը), որն ամեն տարի թողարկվող «Հայաստանի վիճակագրական տարեգրքի» միջոցով հրապարակում է ՀՀ հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները: Ավելի պարզ և ընկալելի լինելու համար վերոնշյալ ցուցանիշները պայմանականորեն բաժանվում են հետևյալ խոշոր խմբերի՝

¹⁸ Багратян Г.А., Мегээкономика и глобальные экономические проблемы. Учебно-методическое пособие, Ереван, Издательство РАУ, 2013, с. 8:

¹⁹ Օրինակ՝ ՀՀ ՎԿ, «Հայաստանի վիճակագրական տարեգրք 2018», Երևան, 2019 թ., էջ 15-18, առցանց հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.armstat.am/am/?nid=586&year=2018>:

²⁰ Ինդեքսները համեմատական մեծություններ են, որոնք բնութագրում են հաշվետու տարում տվյալ երկուսի փոփոխությունը նախորդ կամ բազիսային տարվա նկատմամբ: Դրանք տե՛ս նույն տեղում՝ էջ 19-20:

1. Սոցիալ-ժողովրդագրական, որը ներառում է տարեվերջին մշտական բնակչության թվաքանակը (դրանում նաև նշվում են աշխատունակ և դրանից ցածր ու բարձր տարիքի քաղաքացիների թիվը՝ ընդամենը և ըստ սեռերի), բնակչության բնական աճը՝ հազար բնակչի հաշվով (հաճախ անվանվում է պրոմիլ), զբաղվածների և գործազուրկների միջին տարեկան թվաքանակները, պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը տարեվերջին և միջին տարեկան անվանական աշխատավարձը.
2. Տնտեսական զարգացման, ինչպիսիք են համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)՝ ընդամենը և մեկ շնչի հաշվով, վերջնական սպառման ծախսերը, համախառն կուտակումը, արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքների ծավալները, շինարարության ծավալը, հիմնական միջոցների գործարկումը շինարարությունում, բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի գործարկումը, ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառությունը և ուղևորաշրջանառությունը, առևտրի շրջանառությունը, ծառայությունների ծավալը.
3. Համախմբված բյուջեի, որում նշվում են վերջինիս եկամուտները, ծախսերը, պակասուրդն ու հավելուրդը (բոլորը՝ ընդամենը և ՀՆԱ-ի նկատմամբ).
4. Դրամավարկային, ինչպիսիք են փողի զանգվածը և տնտեսության վարկային ներդրումները (կարճաժամկետ և երկարաժամկետ).
5. Արտաքին առևտրաշրջանառության (արտահանումը և ներմուծում).
6. Գնային, ինչպիսիք են սպառողական, արդյունաբերական արտադրանքի, գյուղմթերքի իրացման, շինարարության, բեռնափոխադրումների սակագների, ինչպես նաև ներմուծման և արտահանման միջին գների (միավոր արժեքի) ինդեքսները:

Իսկ ինչո՞ւ են սոցիալ-տնտեսական ցուցանիշների վերոնշյալ վեց խմբերը ճանաչվել հիմնական: Բանն այն է, որ դրանց, ինչպես նաև դրանց բացարձակ ու հարաբերական մեծությունների հիման վրա հաշվարկվող մյուս ցուցանիշների միջոցով կարելի է ընդհանրական պատկերացում կազմել ինչպես հասարակության կենսամակարդակի (կյանքի որակի), այնպես էլ տնտեսության զարգացածության աստիճանի մասին: Այսպես, բնակչության թվաքանակի ցուցանիշն ու դրանից ածանցվող ցուցանիշները հստակ պատկերացում են տալիս բնակչության շարժի և դրա կազմում տեղի ունեցող փոփոխությունների մասին: Իսկ գործազուրկների միջին տարեկան թվաքանակի միջոցով կարելի է գնահատել աշխատատեղերի ստեղծման գործում պետության վարած քաղաքականության արդյունավետությունը, քանի որ նոր աշխատատեղերի շնորհիվ իջնում է գործազրկության մակարդակը: ՀՆԱ-ի հիման վրա հաշվարկվող տնտեսական աճի ցուցանիշի միջոցով էլ կարելի է պարզել, թե որ ուղղություններով է հասարակության առաջխաղացումը: Այն հիմնականում չափվում է տնտեսական հավելաճի ցուցանիշի միջոցով, որը հաշվարկվում է հաշվետու (տվյալ տարվա) և նախորդ տարվա ՀՆԱ-ների մեծությունների տարբերությունը հարաբերելով նախորդ տարվա ՀՆԱ-ի մեծությանը: Ստացված ցուցանիշը կոչվում է տնտեսական հավելաճի ցուցանիշ, որը տարբերվում է ՀՆԱ-ի աճի ցուցանիշից (աճը հավասար է հավելաճին գումարած 100 %): Այդպես էլ երկրի բնակչության կենսամակարդակի ու եկամուտների աճ ապահովելու համար բնակչության անվանական աշխատավարձի մեծության ինդեքսը պետք է գերազանցի սպառողական գների ինդեքսի մեծությունը: Կարևորագույններից են նաև երկրի արտահանման ցուցանիշները և դրանց մասնաբաժինը երկրի արտաքին առևտրաշրջանառությունում (արտահանման և ներմուծման հանրագումարը). որքան մեծ է մասնաբաժինը, այնքան բարձր է գնահատվում երկրի սոցիալ-տնտեսական առաջադիմությունը, քանի որ ապրանքների ու ծառայությունների արտահանման շնորհիվ է ապահովվում դրամական միջոցների ներհոսքը:

Աղյուսակ 1-ում բերված է Հայաստանի Հանրապետության հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշների մի մասը, որն ամբողջական պատկերացում է տալիս հանրապետության զարգացման մասին: Աղյուսակի տվյալների վերլուծությունից բխում են հետևյալ եզրահանգումները.

- Բնակչության թվաքանակը 2017 թ. 2005 թ-ի համեմատությամբ նվազել է 7.2 %-ով, թեև բնակչության բնական հավելվածը մնացել է անփոփոխ.
 - 2017 թ. գործազուրկների միջին տարեկան թվաքանակը ավելի քան 3 անգամ գերազանցել է պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակի ցուցանիշը.
 - Թեև ՀՀ դրամով արտահայտված անվանական ընդհանուր ՀՆԱ-ն ավելացել է 2.5, իսկ մեկ շնչի հաշվով՝ 2.7 անգամ, այս ցուցանիշները շարունակում են մնալ ցածր.
 - 2005 թ-ից սկսած՝ զգալիորեն ավելացել են վերջնական սպառման ծախսերը (2017 թ. ցուցանիշը 2005 թ-ի համեմատ ավելացել է 2.5 անգամ).
 - 2005 թ-ից սկսած՝ ՀՆԱ-ի կազմում նվազել է համախառն կուտակման բաժինը (2017 թ. ցուցանիշը 2005 թ-ի համեմատ նվազել է 11.0 տոկոսային կետով).
 - Հատկապես 2009 թ-ից հետո նկատվել է ինչպես արդյունաբերական, այնպես էլ գյուղատնտեսական արտադրանքի զգալի աճ ինչպես բացարձակ ցուցանիշներով, այնպես էլ ՀՆԱ-ի կազմում.
 - 2008 թ-ից նկատվել է շինարարության ծավալների զգալի անկում ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական առումով.
 - Թեև համախմբված բյուջեի եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ ավելացել են, սակայն դրանք շարունակում են մնալ ցածր.
 - Էապես ավելացել են տնտեսության վարկային ներդրումները (ՀՀ դրամով՝ 13.3 անգամ, ԱՄՆ դոլարով՝ 12.5 անգամ).
 - Եթե 2009 թ. (ճգնաժամային ամենավատ տարում) սննդամթերքի արտահանման և ներմուծման տարբերությունը կազմել է -477.2 մլն ԱՄՆ, ապա 2015 թ.՝ -279,3 մլն, իսկ 2017 թ.՝ -121.7 մլն դոլար:
- Բացի նշված սոցիալ-տնտեսական ցուցանիշներից՝ երկրի զարգացման տեսանկյունից կարևորվում են նաև տնտեսության պարտքային բեռը, պետական պարտքի հիմնախնդիրը և պետական պարտքի ցուցանիշների ուսումնասիրությունը, որոնք կքննարկվեն հաջորդիվ:

Աղյուսակ 1

**Հայաստանի Հանրապետության հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները
2005-2017 թթ.**

N	Ցուցանիշները	2005	2009	2010	2015	2017	2017 թ. 2005 թ-ի նկատմամբ, %
1	2	3	4	5	6	7	8
1.	Բնակչության թվաքանակը, տարեվերջին, հազ. մարդ	3219.2	3249.5	3034.5	2998.6	2986.1	92.8
2.	Բնակչության բնական հավելվածը, հազ. մարդ	11.1	16.8	16.9	13.9	10.3	92.8
	հազ. բնակչի հաշվով	3.5	5.2	5.5	4.6	3.5	100.0
3.	Զբաղվածների միջին տարեկան թվաքանակը, հազ. մարդ	1097.8	1152.8	1185.2	1072.6	1011.9	92.2
4.	Գործազուրկների միջին տարեկան թվաքանակը, հազ. մարդ	-	265.9	278.2	243.7	218.9	94.5
5.	Պաշտոնական գրանցված գործազուրկների	89.0	84.5	78.8	77.0	70.0	78.7

	թվաքանակը, տարեվերջին, հազ. մարդ						
6.	ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին տարեկան փոխարժեքը	457.7	363.3	373.7	477.9	482.7	105.5
7.	Աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը, ՀՀ դրամ	52060	96019	102652	171615	194259	3.7 անգամ
	ԱՄՆ դոլար	113.7	264.3	274.7	359.8	402.4	3.5 անգամ
8.	Անվանական ՀՆԱ (շուկայական գներով), մլրդ դրամ	2242.9	3141.7	3460.2	5043.6	5580.1	2.5 անգամ
	մլրդ ԱՄՆ դոլար	4.90	8.65	9.26	10.56	11.56	2,3 անգամ
	մեկ շնչի հաշվով, հազ. դրամ	697.1	968.5	1062.7	1678.6	1868.7	2.7 անգամ
	ԱՄՆ դոլար	1523	2666	2844	3512	3871.3	2.5 անգամ
9.	Վերջնական սպառման ծախսերը, մլրդ դրամ, ընթացիկ գներով	1930	2944	3289.6	4599.4	5039.2	2.6 անգամ
	մլրդ ԱՄՆ դոլար	4.22	8.10	8.80	9.62	10.44	2.5 անգամ
	%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	86.0	93.7	95.1	91.2	90.3	4.3 տոկոսային կետ
10.	Համախառն կուտակում, մլրդ դրամ	683.3	1089.2	1137.3	1045.6	1083.6	158.6
	մլրդ ԱՄՆ դոլար	1.49	3.00	3.04	2.19	2.24	150.7
	%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	30.4	34.7	32.8	20.7	19.4	-11.0 տոկոսային կետ
11.	Արդյունաբերական արտադրանքը, մլրդ դրամ	651.9	669.4	824.4	1342.7	1660.9	2.5 անգամ
	մլրդ ԱՄՆ դոլար	1.42	1.84	2.21	2.81	3.44	2.4 անգամ
	%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	29.0	21.3	23.9	26.6	29.8	0.8 տոկոսային կետ
12.	Գյուղատնտեսության արտադրանքը, մլրդ դրամ	493	552.1	636.7	945.4	906.8	183.9
	մլրդ ԱՄՆ դոլար	1.08	1.52	1.70	1.98	1.88	173.9
	%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	22.0	17.6	18.4	18.7	16.3	-5.7 տոկոսային կետ
13.	Շինարարության ծավալը, մլրդ դրամ	435.1	579.7	588.8	481.5	415.9	95.6
	մլրդ ԱՄՆ դոլար	0.95	1.60	1.58	1.01	0.86	90.7
	%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	19.4	18.5	17.0	9.5	7.5	-11.9 տոկոսային կետ
14.	Առևտրի շրջանառությունը, մլրդ դրամ	853.9	1573.2	1810.2	2277.4	2602.1	3 անգամ
	մլրդ ԱՄՆ դոլար	1.87	4.33	4.84	4.77	5.39	2.9 անգամ

	%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	29.0	21.3	23.9	45.2	46.6	17.6 տոկոսա- յին կետ
15.	Ծառայությունների ծավալը, մլրդ դրամ	362.8	737.6	791.2	1147.2	1453.5	4 անգամ
	մլրդ ԱՄՆ դոլար	0.79	2.03	2.12	2.40	3.01	3.8 անգամ
	%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	16.1	23.5	22.9	22.7	26.0	9.9 տոկոսա- յին կետ
16.	Համախմբված բյուջեի եկամուտները, մլրդ դրամ	449.9	711.7	804.3	1201.7	1237.1	2.7 անգամ
	մլրդ ԱՄՆ դոլար	0.98	1.96	2.15	2.51	2.56	2.6 անգամ
	%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	20.0	22.7	23.2	23.8	22.2	2.2 տոկոսա- յին կետ
17.	Համախմբված բյուջեի ծախսերը, մլրդ դրամ	499.5	947.6	975.9	1444	1503.8	3 անգամ
	մլրդ ԱՄՆ դոլար	1.09	2.61	2.61	3.02	3.12	2.8 անգամ
	%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	22.2	30.2	28.2	28.6	26.9	4.7 տոկոսա- յին կետ
18.	Տնտեսության վարկային ներդրումները, մլրդ դրամ	191.2	724.8	891.8	1939.7	2545.7	13.3 անգամ
	մլրդ ԱՄՆ դոլար	0.42	2.00	2.39	4.06	5.27	12.5 անգամ
19.	Արտաքին առևտրաշրջանառությու- նը, մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝	2775.6	4031.3	4790	4724.6	6425.6	2.3 անգամ
	Արտահանում	973.9	710.2	1041.1	1485.3	2242.9	2.3 անգամ
	այդ թվում՝ սննդամթերքի*	114.10	134.80	170.15	390.3	638.6	5.6 անգամ
	Ներմուծում	1801.7	3321.1	3748.9	3239.2	4182.7	2.3 անգամ
	այդ թվում՝ սննդամթերքի*	315.90	612.0	673.5	663.3	760.4	2.4 անգամ
20.	Սպառողական գների ինդեքսը (նախորդ տարվա նկատմամբ, %)	100.6	103.4	108.2	103.7	101.0	100.4
21.	Սննդամթերքի արտահանման և ներմուծման տարբերությունը, մլն ԱՄՆ դոլար*	- 201.80	-477.2	- 503.35	-279.3	-121.7	60.3
22.	Պետական բյուջեի պակասուրդը (-), հավելուրդը, %-ով ՀՆԱ-ի նկատմամբ	-1.7	-7.7	-5.0	-4.8	-4.8	-3.1 տոկոսա- յին կետ

Կազմվել և հաշվարկվել է հեղինակների կողմից, աղբյուրներ՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2012 թ., էջ 15-18, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2013 թ., էջ 9, 78, 79, 127, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թ. հունվար-փետրվարին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2017 թ., էջ 112, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ՎԿ, Երևան, 2018 թ., էջ 134, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-փետրվարին, ՀՀ ՎԿ, Երևան, 2018 թ., էջ 104-113:

3.3. Արտաքին պետական պարտք և դրա կառավարումը

Ժամանակակից տնտեսությունը դժվար է պատկերացնել առանց վարկային կապիտալի և դրա շուկայի: Ինչպես տնտեսավարողների, այնպես էլ կառավարությունների (պետական բյուջեի) դրամական միջոցները հաճախ չեն բավարարում անխափան գործունեության և ծրագրերի իրականացման համար, և նման դեպքերում անհրաժեշտություն է դառնում փոխատվությունների ներգրավումը:

Երկրների կառավարությունները առողջապահության, կրթության, գիտության, բնակչության սոցիալական ապահովվածության, սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների, ազգային անվտանգության ու պաշտպանության ոլորտներում գումար ներդնելու և այլ ծառայություններ մատուցելու առաքելություն ունեն: Սակայն նշված ծրագրերի իրականացման համար անգամ ամենահարուստ երկրների կառավարությունները ստիպված են լինում միջոցներ փոխառել, քանի որ սեփական գանձապետական համակարգում հավաքագրված գումարները երբեմն չեն հերիքում: Վերջինիս պատճառներից կարող են լինել հարկային եկամուտների՝ կանխատեսվածից քիչ հավաքագրումը, երբեմն էլ՝ տնտեսության կառուցվածքին և ժողովրդագրական կազմին վերաբերող դժվարությունները, որոնց կառավարությունները հաճախ բախվում են, երբ երկրի տնտեսության կառուցվածքը չի համապատասխանում ներքին և արտաքին շուկաների պահանջներին, կամ էլ երբ երկրի բնակչությունը ծերանում է, իսկ կենսաթոշակային, առողջապահական ու սոցիալական ծախսերն աճում են ավելի մեծ արագությամբ, քան պետության դրամական եկամուտներն ու ՀՆԱ-ն:

Վարկային կապիտալի միջազգային շուկայում երկրների կառավարությունները, բանկերը կամ մասնավոր ընկերությունները, ինչպես նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունները միջոցներ են տրամադրում այլ երկրների կառավարություններին, բանկերին և մասնավոր ընկերություններին: Այսօր դժվար է աշխարհում գտնել բաց տնտեսությամբ որևէ մի երկիր, որը ներգրավված չլինի միջազգային փոխառվական հարաբերություններում կամ որպես վարկառու, կամ էլ վարկատու. հաճախ երկրները հանդես են գալիս երկուսի դերում էլ, քանի որ միջազգային փոխառությունների շարժը չի կարող միակողմանի բնույթ ունենալ: Այդպիսով ձևավորվում է երկրի արտաքին պետական պարտքը, որը, ըստ ընդունված պրակտիկայի, բաղկացած է տվյալ երկրի կառավարության և կենտրոնական բանկի ստանձնած անմիջական վարկային պարտավորություններից ու երաշխիքներից²¹: Պարտքային հարաբերությունների էությունը ներկայացնելու համար նշենք այն կարևոր սկզբունքները, որոնք գործում են ցանկացած պարտքի տրամադրման ժամանակ: Դրանք են՝ (1) վերադարձելիություն (տրվող միջոցները պետք է վերադարձվեն), (2) ժամկետայնություն (պարտքը պետք է վերադարձվի նախօրոք պայմանավորված ժամկետում), (3) վճարելիություն, (4) ապահովագրվածություն (վարկի մարման երաշխիքների տրամադրում) և (5) նպատակայնություն (փոխառված միջոցները պետք է օգտագործվեն կոնկրետ նպատակների իրագործման համար):

Ժամանակակից շուկայական տնտեսության վիճակը կարելի է բնորոշել իբրև «Պետական պարտքի համաշխարհային ճգնաժամ»: Հատկապես վերջին 20-30 տարիների ընթացքում վարկային կապիտալը դարձել է ինչպես համաշխարհային, այնպես էլ ազգային տնտեսությունների առաջընթացի կարևորագույն գործիքներից մեկը (հաճախ ամենակարևորը): Ընդ որում՝ արդյունաբերական զարգացած երկրները կամ նրանց տնտեսական միությունները (օրինակ՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) և Եվրամիությունը) ֆինանսավորում են զարգացող երկրների տնտեսություններին: Այսուհանդերձ, նույնիսկ Եվրագոտու շատ երկրներում, որոնք բնակչության բարձր կենսամակարդակ և առողջ

²¹ Տե՛ս, օրինակ՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան, ՀՀ ԱՎԾ, 2017, էջ 395:

տնտեսություն ունեն, 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո պետական պարտքի ծավալներն ավելացան, քանի որ հարկաբյուջետային անհավասարակշռության կայունացման համար բյուջետային խնայողությունների կտրուկ միջոցառումների կարիք առաջացավ, որոնք միննույն ժամանակ ուղեկցվելու էին կառուցվածքային բարեփոխումներով: 2008-2012 թթ. արտաքին պետական պարտքի նկատելի աճ գրանցվեց նաև ՏՀԶԿ-ի անդամ երկրներում, թեև վերջին տարիներին պարտքի աճի տեմպը նվազել է: Ըստ որոշ գնահատականների՝ ՏՀԶԿ-ի անդամ երկրների կառավարությունները ինչպես 2017 թ., այնպես էլ 2018 թ. տարբեր ֆինանսական շուկաներից փոխառել են շուրջ 10.5 տրիլիոն ԱՄՆ դոլար: Կազմակերպությանը անդամակցող երկրների ընդհանուր պարտքը 2017 թ. կազմել է շուրջ 43.6 տրիլիոն ԱՄՆ դոլար, իսկ 2018 թ.՝ շուրջ 45 տրիլիոն ԱՄՆ դոլար, մինչդեռ 2008 թ. այն 25 տրիլիոն ԱՄՆ դոլար էր²²:

Կարելի էր ենթադրել, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից մեկ տասնամյակ անց շատ երկրների կառավարություններ պետք է դասեր քաղած լինեին նախկին սխալներից, սակայն միջազգային կազմակերպությունների (ՎԶԵԲ, ԱՄՀ, ՀԲ) տվյալներն այլ բանի մասին են վկայում: Ըստ ԱՄՀ-ի վերլուծությունների՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում պետական պարտքի և ՀՆԱ-ի հարաբերությունը մեծացել է՝ հասնելով աննախադեպ բարձր ցուցանիշների: Բավական է նշել, որ ներկայումս համաշխարհային արտաքին պարտքի մեծությունը գերազանցում է ՀՆԱ-ի մեծությունը ավելի քան 3 անգամ: Ավելի անհանգստացնողն այն է, որ ներկայումս պարտքային ճգնաժամ առկա է, կամ այդպիսի ճգնաժամի հավանականությունը շատ բարձր է զարգացող երկրներում, այդպիսի 59 երկրներից 24-ում²³: Եվ եթե այս գնահատականները ճշմարիտ են, ապա հետագայում ամենաշատը տուժելու են, ինչպես միշտ, այդ երկրների բնակչության խոցելի ու անպաշտպան խմբերն ու շերտերը:

Դիտարկելով զարգացած երկրներում պետական պարտքի չափի շարժը (դինամիկան)՝ կարող ենք նկատել հետևյալ օրինաչափությունը. զարգացած երկրների մեծ մասում պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը զգալի է, իսկ որոշ երկրներում այն գերազանցում է 100 %-ը: Այսպես՝ 2012-2018 թթ. ԱՄՆ-ում պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը 103.4 %-ից հասել է 106.1 %-ի, Բելգիայում՝ համապատասխանաբար 104.3 %-ից 101.2 %-ի, Իտալիայում՝ 123.4 %-ից 130.3 %-ի, Սինգապուրում՝ 105.1 %-ից 112.8 %-ի, Ֆրանսիայում՝ 90.6 %-ից 96.7 %-ի, Բրիտանիայում՝ 84.1 %-ից 87.4 %-ի, Ֆինլանդիայում՝ 53.9 %-ից 60.5 %-ի: Պետական պարտք/ՀՆԱ ամենաբարձր ցուցանիշը ինչպես 2012 թ., այնպես էլ 2018 թ. եղել է Ճապոնիայում՝ 2012 թ. կազմելով 229.1 %, իսկ 2018 թ.՝ 238.2 %: Պետական պարտք/ՀՆԱ հարաբերության ամենացածր ցուցանիշը գրանցվել է Հոնկոնգում, որտեղ 2012 թ. այն կազմել է 0.545 %, իսկ 2018 թ.՝ 0.052 %²⁴: Գալով ԵԱՏՄ երկրներին՝ Ռուսաստանի Դաշնությունում 2012 թ. հարաբերությունը կազմել է 11.9 %, իսկ 2018 թ.՝ 15.3 %, Բելառուսում՝ համապատասխանաբար 36.9 % և 55.9 %, Ղազախստանում՝ 12.1 % և 17.8 %, Ղրղզստանում՝ 48.9 % և 54.9 %: Իսկ Հայաստանի հարևան երկրներում պատկերը հետևյալն է. Թուրքիայում 2012 թ. այն կազմել է 32.7 %, իսկ 2018 թ.՝ 32.3 %, Իրանի Իսլամական Հանրապետությունում՝ 12.1 % և 44.2 %, Վրաստանում՝ 34.8 % և 43.9 % և Ադրբեջանում՝ 13.7 % և 48.3 %²⁵:

²² "Percentage of Public Debt to GDP around the World 2018", <https://www.gfmag.com/global-data/economic-data/public-debt-percentage-gdp>, դիտվել է 19.08.2019թ.-ին:

²³ Նույն տեղում:

²⁴ "Percentage of Public Debt to GDP" աղյուսակում <https://www.gfmag.com/global-data/economic-data/public-debt-percentage-gdp>, 19.08.2019թ.-ին տեղադրված տվյալներով:

²⁵ Նույն տեղում:

Վերոնշյալ տվյալներին ծանոթանալիս կարևորագույն մի հարց է ծագում. ինչպե՞ս է, օրինակ, Ճապոնիայի նման երկիրը կառավարում իր պետական պարտքը, որն ավելի քան երկու անգամ գերազանցում է ՀՆԱ-ի մեծությունը: Հարկ է նշել, որ Ճապոնիայի պետական պարտքի զգալի մասը ներքին է. եթե այլ երկրները մեծ մասամբ պարտք են վերցնում օտարերկրյա վարկատուներից, ապա Ճապոնիայի դեպքում պետական պարտքը ձևավորվում է «Ծագող արևի երկրի» քաղաքացիների փոխատվություններից, ինչը զգալիորեն նվազեցնում է անվճարունակության (կամ դեֆոլթի) վտանգը: Իսկ այն դեպքերում, երբ պարտատերն օտարերկրյա պետություն է, կարող է զգալի լարվածություն առաջանալ պարտավորությունների կատարման հարցում, ինչը զգալիորեն վնասում է երկրի ֆինանսական և միջազգային վարկանիշներին:

Հայաստանի Հանրապետությունը փոխատվական հարաբերություններում ներգրավվեց անկախության հռչակումից հետո՝ շուկայական տնտեսությանն անցնելու առաջին իսկ տարիներից: 1990-ական թվականների սկզբին հռչակելով իր անկախությունը՝ Հայաստանը հայտնվեց բավականին ծանր տնտեսական վիճակում և ստիպված էր արմատական փոփոխություններ մտցնել թե՛ տնտեսության և թե՛ սոցիալական ոլորտներում: Բարեփոխումները զգալի ֆինանսական միջոցներ էին պահանջում, որոնք, սակայն, մեր երկիրը չուներ: Ուստի շուկայական տնտեսության անցնելու համար ՀՀ-ն ստիպված էր օտարերկրյա փոխատվական միջոցներ ներգրավել՝ այդպիսով վարկային պարտավորություններ ստանձնելով այլ երկրների և միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունների առաջ:

Հայաստանի Հանրապետության տնտեսական կյանքին առնչվող կարևորագույն օրենքներից մեկը «Պետական պարտքի մասին» օրենքն է (ընդունվել է 2008 թ. մայիսի 26-ին), որը կարգավորում է ՀՀ պետական պարտքային հարաբերությունները: Օրենքի հոդված 2-ում սահմանված են դրանում օգտագործվող հասկացությունները, ինչպիսիք են՝

- **«պետական պարտք»**՝ Հայաստանի Հանրապետության անունից և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) անունից (բացառությամբ ռեզիդենտների հանդեպ Կենտրոնական բանկի առկա պարտքային պարտավորությունների) ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը.
- **կառավարության պարտք**՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը.
- **Կենտրոնական բանկի պարտք**՝ ոչ ռեզիդենտների, օտարերկրյա պետությունների առջև Կենտրոնական բանկի ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը.
- **արտաքին պետական պարտք**՝ Հայաստանի Հանրապետության անունից և Կենտրոնական բանկի անունից Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների և օտարերկրյա պետությունների հանդեպ ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը» և այլն²⁶:

Կարևոր է նկատել, որ 2015 թվականի հունիսի 23-ին ընդունված ««Պետական պարտքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով²⁷ սահմանվեց, որ նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 60 %-ը չգերազանցելու պահանջը

²⁶ «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2008 թ. մայիսի 26-ին, ՀՕ-78-Ն: Փոփոխություններով և լրացումներով տարբերակը՝ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական www.arlis.am կայքում:

²⁷ ««Պետական պարտքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2015 թ. հունիսի 23-ին, ՀՕ-97-Ն: Տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական www.arlis.am կայքում:

կիրառվում է ոչ թե պետական, այլ կառավարության պարտքի նկատմամբ: Օրենքում ևս մեկ փոփոխություն կատարվեց 2017 թ. դեկտեմբերի 20-ին²⁸, որով էլ խմբագրվեց կառավարության պարտքի և ՀՆԱ-ի հարաբերակցության պահանջը (հոդված 5), ըստ որի. «Յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքի և Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի հարաբերակցության սահմանային շեմը 60 % է»:

Վերջին տարիներին ավելացել է նաև ՀՀ արտաքին պետական պարտքի մեծությունը. եթե 2005 թ. այն կազմում էր 546 մլրդ ՀՀ դրամ (կամ ՀՆԱ-ի արժեքի նկատմամբ 24.4 %-ը), ապա 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3349 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի արժեքի 55.8 %-ը: 2018 թ. ցուցանիշը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ նվազել է 3.1 տոկոսային կետով, ինչը հիմնականում պայմանավորված է անվանական ՀՆԱ-ի առաջանցիկ աճով (կազմել է 7.9 %՝ պետական պարտքի 2.1 % աճի դիմաց) և կառավարության պարտքի փաստացի մակարդակի՝ ծրագրվածից ցածր լինելու հանգամանքով²⁹:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում 2019 թ. փետրվարի 28-ի դրությամբ, ըստ գործիքակազմի, 64.7 %-ը արտաքին վարկերն են, 19.4 %-ը՝ դրամային պարտատոմսերը, 15.6 %-ը՝ արտարժույթային պարտատոմսերը, իսկ 0.3 %-ը՝ երաշխիքները: Ըստ ռեզիդենտության՝ կառավարության պարտքի 77.8 %-ը կազմում է արտաքին պարտքը, իսկ 22.2 %-ը՝ ներքինը: Ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության՝ կառավարության պարտքի 91.3 %-ը երկարաժամկետ է, 7.8 %-ը՝ միջնաժամկետ, իսկ 0.9 %-ը՝ կարճաժամկետ: Արժույթային կառուցվածքը ունի հետևյալ տեսքը. 43.4 %-ը ԱՄՆ դոլարով է, 23.9 %-ը՝ SDR-ով (անգլ.՝ Special Drawing Rights, «Փոխանակման հատուկ իրավունքներ»), 9.1 %-ը՝ եվրոյով, 3.6 %-ը՝ ճապոնական յենով, մնացածը՝ այլ արժույթներով:

Կառավարության արտաքին փոխառությունների կառուցվածքը, ըստ վարկատուների, հետևյալն է. 25.9 %-ը տրամադրվել է Զարգացման միջազգային ընկերակցության կողմից, 17.2 %-ը՝ Ասիական զարգացման բանկի, 16.5 %-ը՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի, 2.9 %-ը՝ Եվրոպական ներդրումային նանկի, և 1.8 %-ական էլ՝ Արժույթի միջազգային հիմնադրամի և Եվրամիության կողմից: Երկրների առումով, Ռուսաստանի Դաշնությանը բաժին է ընկնում արտաքին վարկերի 7.5 %-ը, Ճապոնիային (JICA)՝ 5.6 %-ը, Գերմանիային (KfW)՝ 5.1 %-ը, Ֆրանսիային՝ 3.1 %-ը, իսկ մնացածը՝ մյուս երկրներին³⁰:

Ներկայումս պետության տնտեսական քաղաքականության առանցքային հիմնախնդիրն է դարձել արտաքին պետական պարտքի արդյունավետությունը: Օտարերկրյա փոխառություններից օգուտներ քաղելու համար երկիրը պետք է կարողանա, նպատակայնությունից բացի, ապահովել նաև դրանց հնարավորինս արդյունավետ օգտագործումը՝ տնտեսելով ֆինանսական միջոցները և ներդնելով արտասահմանյան փորձն ու տեխնոլոգիաները: Կառավարությունը պետք է ի վիճակի լինի ձևավորելու առաջնային հավելյալ եկամուտներ (հարկային եկամուտները պետք է գերազանցեն կառավարության ծրագրերի իրականացման համար պարտքով վերցված գումարները), որոնք կբավարարեն սահմանված ժամկետներում (համապատասխան ժամանակացույցով) գումարները վերադարձնելու համար: Բանն այն է, որ արտաքին պետական պարտքի միջոցները, ի տարբերություն կառավարության ներքին միջոցների, ոչ միայն պետք է

²⁸ «Պետական պարտքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2017 թ. դեկտեմբերի 20-ին, ՀՕ-6-Ն: Տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական www.arlis.am կայքում:

²⁹ «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը», Տարեկան հաշվետվություն 2018, էջ 7, հասանելի է առցանց www.minfin.am/hy/page/tarekan_hashvetvutyunner/ հղումով, դիտվել է 20.08.2019:

³⁰ ՀՀ կառավարության պարտքը 2019 թ. փետրվարի 28-ի դրությամբ, ամսական ամփոփ տեղեկագիր, ՀՀ ֆինանսների նախարարություն, www.minfin.am/hy/page/amsakan_vichakagrakan_teghekagrer/

ամբողջովին վերադարձվեն, այլև պետք է վճարվեն դրանց սպասարկման գումարները, որոնք, հաշվի առնելով նախորդ տարիների ընթացքում կուտակված արտաքին պարտքի մեծությունը, շատ հաճախ զգալի են: Նկատենք, որ ՀՀ արտաքին պետական պարտքի օգտագործման ցուցանիշների վերլուծությունը վկայում է վերջին 17 տարիներին դրա ցածր արդյունավետության և երկրի զարգացման ցածր տեմպերի մասին³¹: Ապագայում առաջընթաց ապահովելու համար պետության գերխնդիրն է իր հետագա սերունդներին ոչ թե անցյալում կուտակված պարտավորություններ, այլ կայուն տնտեսական հիմք թողնել, որի վրա հնարավոր կլինի ստեղծել առողջ և արագ զարգացող արդյունավետ տնտեսություն:

Արտաքին պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման գործում նաև զգալի դերակատարում կարող է ունենալ հասարակական վերահսկողությունը, հատկապես հասարակական կազմակերպություններին: Այս նպատակով Եվրամիության բազմաթիվ երկրներում օգտագործվում են մի շարք գործիքները. օրինակ՝ Գերմանիայում հասարակական կազմակերպությունների կողմից, ընդ որում՝ սեփական միջոցներով, հանրությանը տեսանելի վայրերում էլեկտրոնային եղանակով ցուցադրվում են արտաքին պարտքի և դրա փոփոխության ցուցանիշները, ամեն տարի թողարկվում է «Սև գիրք»-ը, որի մեջ ներառվում են այն օբյեկտները, որոնք կառուցվել են արտաքին պետական պարտքի միջոցներով և տարբեր պատճառներով անավարտ մնացել (ինչպես Հայաստանում «Հյուսիս-Հարավ» ճանապարհը):

3.4. Տնտեսական ինտեգրում: Այսրկովկասյան և տարածաշրջանի մյուս երկրների տնտեսական ինտեգրվածության մակարդակը

Տնտեսական ինտեգրումը (համագործակցությունը) երկրների միջև կայուն տնտեսական հարաբերությունների ձևավորման գործընթացն է, որը, շնորհիվ արտաքին տնտեսական և մասնավորապես արտադրական փոխանակության, սերտորեն իրար է միահյուսում ազգային տնտեսություններն ու ձևավորում միասնական տնտեսական համալիր:

Տնտեսական ինտեգրման էությունն առավել խորությամբ ըմբռնելու համար նախևառաջ այն դիտարկենք աշխատանքի միջազգային բաժանման տեսանկյունից, քանի որ վերջինս անխուսափելիորեն նպաստում է տնտեսական համագործակցության խորացմանը: Աշխարհի բոլոր երկրներն էլ այս կամ այն չափով ներգրավված են աշխատանքի միջազգային բաժանման մեջ: Բանն այն է, որ դրա շնորհիվ բարձրանում է համագործակցող երկրների տնտեսական արդյունավետությունը, իսկ բնական ռեսուրսներից կախվածությունը՝ էապես նվազում: Սա տեղի է ունենում արտադրական կարողությունների զարգացման շնորհիվ, որի վրա էլ, անշուշտ, իր ազդեցությունն է թողնում տեխնոլոգիական հեղափոխությունը. նոր արտադրական կարողությունները նախ ծնվում և զարգանում են մեկ երկրում, ապա մրցակցային պայքարի շնորհիվ տարածվում՝ ընդգրկելով տարածաշրջանը:

Ինտեգրացիոն գործընթացների խորացմանն են նպաստում նաև հենց շուկայական տնտեսության տրամաբանությունը և տնտեսագիտության դասական տեսությունը, այն է՝ առևտրի և արտադրական գործոնների ազատ փոխանակությունը: Արտադրական գործոնների (աշխատուժ, կապիտալ, տեխնոլոգիաներ, տեղեկատվություն և ձեռնարկատիրական փորձ) ազատականացումը ազգային տնտեսություններին թույլ է տալիս առավել հեշտությամբ հարմարվել արտաքին պայմաններին և գործունե կերպով ընդգրկվել միջազգային կապիտալի բաժանման գործընթացում: Այսպիսով՝ արտադրողական պոտենցիալը լայնորեն տարածվում է տարածքային սահմաններից

³¹ A. Kh. Markosyan, E. N. Matevosyan, T. S. Martirosyan. "The assesment of the effectiveness of state external debt of the government of the Republic of Armenia", Տեղեկագիր բարձր տեխնոլոգիաների, N 2 (9) / 2019, Շուշի, 2019 թ., էջ 36-49:

դուրս, ընդ որում՝ այս գործընթացը վերաբերում է ոչ միայն ապրանքներին, այլև կապիտալին, ծառայություններին և աշխատուժին:

Այսուամենայնիվ, հարկ է նշել, որ տնտեսական ինտեգրման գործընթացները բարդ ու հակասական են և ճանապարհին բախվում են բազմաթիվ խոչընդոտների, ինչպիսիք են տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական և տեխնոլոգիական գործոնները: Ուստի տնտեսական համագործակցության խորացման կարևորագույն բաղկացուցիչներից են ազգային տնտեսությունների միջև արգելքների հաղթահարումը և բացության ապահովումը:

Միկրոմակարդակում ինտեգրումը տեղի է ունենում սահմանակից երկրների ձեռնարկությունների միջև պայմանագրերի կնքման, ինչպես նաև արտասահմանում մասնաճյուղերի ստեղծման ճանապարհով, իսկ միությունների միջև՝ երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի և դրանց հիման վրա կազմված տնտեսական քաղաքականությունների համաձայնեցման միջոցով: Միջպետական տնտեսական համագործակցության նպատակ է տվյալ տարածքում ապահովել ապրանքների և արտադրական գործոնների ազատ շարժը, համաձայնեցնել և համատեղ իրականացնել համագործակցող երկրների տնտեսական, գիտատեխնիկական, ֆինանսական, արժույթային, սոցիալական և ռազմական ծրագրերը: Սա է պատճառը, որ միություններում ստեղծվում են միջազգային կամ միջպետական կառավարման մարմիններ, միասնական են արժույթը, ենթակառուցվածքները և ֆինանսական շահերը:

Երկրների միջև տնտեսական ինտեգրումը տեղի է ունենում միաժամանակ երկու ուղղությամբ՝ գլոբալ և տարածաշրջանային: Սակայն կախված քաղաքական, տնտեսական, պատմական, աշխարհագրական, ազգային, մշակութային և այլ առանձնահատկություններից՝ աշխարհի տարբեր մասերում այն ընթանում է տարբեր արագություններով: Մյուս կողմից, եթե ազգային տնտեսության ինտեգրումը համաշխարհային տնտեսության մեջ շատ երկարատև գործընթաց է, ապա որոշակի տարածաշրջանի շրջանակներում, շնորհիվ տնտեսությունների միջև եղած արգելքներն արագ հաղթահարելու հնարավորության, այն իրականանալի է առավել կարճ ժամկետներում: Ահա այս պատճառներով այն երկրները, որոնք ունեն տնտեսական զարգացման համանման մակարդակ, տնտեսությունը կառավարելու միանման մեթոդներ և աշխարհագրորեն ու մշակութապես մոտ են միմյանց, ձևավորում են տարածաշրջանային ինտեգրացիոն կազմակերպություններ, որոնց շրջանակներում ավելի են խորացնում միմյանց հետ տնտեսական համագործակցությունը: Սկզբնապես տարածաշրջանային ինտեգրման գործընթացներն ի հայտ են եկել արտադրական ռեսուրսների միավորման նպատակով: Իսկ այժմ ինչպես միջազգային, այնպես էլ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման են ենթարկվում թե՛ գիտատեխնիկական նվաճումները, թե՛ ապրանքներն ու ծառայությունները և թե՛ բոլոր տեսակի արտադրական ռեսուրսները: Վերջերս հատկապես կարևորվում են տեղեկատվական և ինժեներական ոլորտները:

Մեր օրերում գլոբալացումը դարձել է միջազգային բոլոր տեսակի հարաբերություններում տեղի ունեցող խոր փոփոխությունների հիմնական ուղղությունը. այն արտահայտվում է հասարակական կյանքի և մարդկային գործունեության տարբեր, այդ թվում նաև տնտեսական, ոլորտների փոխշաղկապվածությամբ և փոխադարձ ազդեցության ուժեղացումով: Ներկայումս երկրների տնտեսական համագործակցությունը զարգացման աքսիոմներից է, այլ կերպ ասած՝ տնտեսական աճի և բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնական միջոցներից մեկը: Գրեթե բոլոր երկրները ներփակ ազգային տնտեսություններից անցնում են բացի, աստիճանաբար ձևավորվում և սերտանում են տարածաշրջանային տնտեսական կապերը, և դրանց հիման վրա են սահմանվում համագործակցող երկրների հետագա զարգացման հեռանկարները: Իսկ ազատ և արդյունավետ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ է դառնում տնտեսական, իրավական և տեղեկատվական միասնական տարածքի ձևավորումը: Այս բոլոր փոփոխությունների արդյունքում XXI դարասկզբին մեծ թափ է ստացել կապիտալի միջազգային շարժը, իսկ միջազգային տնտեսական հարաբերությունների (ՄՀՀ) ուշադրությունը

շրջանառության ոլորտից աստիճանաբար տեղափոխվում է արտադրականի վրա: Այս իրողությունը վկայում է այն մասին, որ աշխարհն անցնում է միջազգային տնտեսական հարաբերությունների և ինտեգրման որակապես նոր աստիճանի:

Տնտեսական ինտեգրման շնորհիվ համագործակցող երկրները մի շարք ընդհանուր առավելություններ և հնարավորություններ են ձեռք բերում, որոնցից են՝

- Տնտեսության մասշտաբի մեծացում. այն հնարավորություն է ընձեռում ներգրավելու օտարերկրյա ուղղակի ներդրումներ, քանի որ վերջիններս կուտակվում են մեծամասշտաբ շուկա ունեցող երկրներում, իսկ մյուս կողմից մեծանում է ներքին տնտեսվարողների շուկան.
- Տնտեսական մեկուսացվածության հաղթահարում.
- Առևտրային քաղաքականության հզորացում. տարածաշրջանային ինտեգրումը հաճախ դիտվում է որպես Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակում ընթացող բազմակողմ առևտրային բանակցություններում համագործակցող երկրների դիրքերի ամրացման միջոց: Երկրների կողմից համաձայնեցված ելույթներն ունենում են առավել մեծ կշիռ, ինչն էլ առևտրային քաղաքականության ցանկալի արդյունքներ է ծնում: Ավելին՝ տարածաշրջանային միավորումները թույլ են տալիս առևտրի համար ստեղծել առավել հաստատուն և կանխատեսելի միջավայր, քան բազմակողմ մեկուսի բանակցությունները, քանի որ վերջիններիս մասնակիցների շահերը զգալիորեն տարբերվում են միմյանցից.
- Գործընկերների արտադրական ռեսուրսներից ազատորեն օգտվելու հնարավորություն.
- Տնտեսության կառուցվածքային վերափոխման գործընթացների արագացում. շուկայական տնտեսություն կերտող կամ տնտեսական վերափոխումներ իրականացնող երկրների համագործակցությունը շուկայական զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների հետ կարևորագույն միջոց է շուկայական փորձի փոխանակման համար: Այն նաև երաշխավորում է ընտրված շուկայական ուղու անփոփոխելիությունը: Առավել զարգացած երկրները նույնպես շահագրգռված են համագործակցելու, քանի որ շուկայական վերափոխումների արագացումը նպաստում է լիարժեք և ծավալուն շուկաների ստեղծմանը.
- Բարենպաստ ներքաղաքական միջավայրի ստեղծում և համագործակցություն քաղաքական, ռազմական, սոցիալական, մշակութային և այլ ոչ տնտեսական ոլորտներում.
- Ազգային տնտեսության երիտասարդ ճյուղերի հովանավորում. անգամ եթե ինտեգրվող երկրները երրորդ երկրների նկատմամբ խտրական քաղաքականություն չեն նախատեսում, նույնը չի կարելի ասել տեղական արտադրողներին խրախուսելու հարցում, քանի որ վերջիններիս համար բացվում է առավել մեծ տարածաշրջանային շուկա.
- Երրորդ երկրների ընկերությունների մրցակցությունից պաշտպանվածություն:

Այսումենայնիվ, արտադրողական ուժերի բուռն վերելքը և սպառման աննախադեպ աճը ստեղծում են նաև խնդիրներ, ընդ որում՝ հաճախ գլոբալ բնույթի, ինչպիսին են, օրինակ, շրջակա միջավայրի պահպանության հետ կապվածները, որոնք ժամանակին լուծում չստանալու դեպքում կարող են ճակատագրական լինել ազգային տնտեսության համար:

Այսպիսով՝ միջազգային տնտեսական ինտեգրումը կարելի է սահմանել որպես օբյեկտիվ գիտակցված գործընթաց, որի ընթացքում տեղի են ունենում ազգային տնտեսությունների փոխադարձ հարմարեցում և միահյուսում, ինչի հիմքում ընկած են ինքնուրույն գործող տնտեսվարողների միջազգային համագործակցությունը և կապիտալի արտահանումը³²: Դրա նախապայմաններն են համագործակցող երկրների շուկայական զարգացման մակարդակների համապատասխանությունը, այդ երկրների աշխարհագրական մոտիկությունը, նրանց առջև ծառացած խնդիրների ընդհանրությունը, շուկայական վերափոխումներն արագացնելու և ընթացող համագործակցության գործընթացներից անմասն չմնալու ցանկությունը: Տնտեսական

³² Ա. Մարկուսյան, Գ. Նազարյան, Դ. Հախվերդյան, Միջազգային տնտեսական հարաբերություններ: Ուսումնական ձեռնարկ, Երկու մասով, ԵՃՇՊՀ, Երևան, 2012 թ., Մաս II, էջ 494:

համագործակցությունն ի հայտ է գալիս միացյալ շուկայի առավելություններն օգտագործելու, երկրի զարգացման պայմաններ ստեղծելու, տնտեսական հարցերով միջազգային համաձայնագրերում իրենց մասնակցությունն ամրապնդելու, շուկայական վերափոխումների փորձի փոխանակման և ազգային արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման խրախուսման համար:

Այժմ օգտվելով վիճակագրական տվյալներից՝ քննության առնենք ՀՀ և այսրկովկասյան ու տարածաշրջանի մյուս երկրների միջև տնտեսական ինտեգրման առկա վիճակը բնութագրող մի շարք ցուցանիշներ: Տարածաշրջանային համագործակցության կարևորագույն ցուցանիշ է ապրանքների ու ծառայությունների առևտուրը (Աղյուսակ 2): ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքի ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ-ից ապրանքների արտահանման կառուցվածքում ԵԱՏՄ երկրների բաժինը կազմում է 28.3 %, իսկ ներմուծմանը՝ 26.0 %: Հատկանշական է, որ այդ ցուցանիշների աղյուծի բաժինը հասնում է Ռուսաստանի Դաշնությանը: Գալով ՀՀ հարևան երկրներին՝ արտահանման ընդհանուր ցուցանիշում այդ երկրների բաժինը 2018 թ. կազմել է 6.8 %, իսկ ներմուծմանը՝ 11.8 %: Նշված ցուցանիշները վկայում են ՀՀ և տարածաշրջանի մյուս երկրների միջև թույլ արտաքին առևտրի մասին:

Աղյուսակ 2

ՀՀ և այսրկովկասյան ու տարածաշրջանի մյուս երկրների միջև արտաքին առևտուրը և կառուցվածքը 2018 թ.

	Արտահանում, հազ. ԱՄՆ դոլար	Ներմուծում, հազ. ԱՄՆ դոլար	Արտահանման կառուցվածքը, %-ով ընդամենի նկատմամբ	Ներմուծման կառուցվածքը, %-ով ընդամենի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ	2,412,432.7	5,015,544.3	100.0	100.0
այդ թվում՝				
ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ	719,026.9	1,492,903.6	29.8	29.8
այդ թվում՝				
ԵԱՏՄ երկրներ	688,473.6	1,302,499.9	28.5	26.0
այդ թվում՝				
Ռուսաստանի Դաշնություն	665,768.6	1,259,897.1	27.6	25.1
Բելառուս	11,942.9	38,610.2	0.5	0.8
Ղազախստան	9,791.6	3,692.4	0.4	0.1
Ղրղզստան	970.5	300.2	0.0	0.0
ԱՊՀ այլ երկրներ	30,553.3	190,403.7	1.3	3.8
այդ թվում՝				
Ուկրաինա	18,255.8	153,629.9	0.8	3.1
Թուրքմենստան	3,079.8	27,468.0	0.1	0.5
Ուզբեկստան	2,440.2	2,562.5	0.1	0.1
Այլ երկրներ	6,777.5	6,743.3	0.3	0.1
ԵՄ 28 ԵՐԿՐՆԵՐ	683,409.2	1,155,298.8	28.3	23.0
ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ	1,009,996.5	2,367,341.9	41.9	47.2
այդ թվում՝				
Վրաստան	68,685.5	70,774.3	2.8	1.4
Իրանի Իսլամական Հանրապետություն	94,203.6	269,341.4	3.9	5.4

Թուրքիա	2,527.7	252,594.2	0.1	5.0
---------	---------	-----------	-----	-----

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-մայիսին, ՀՀ ՎԿ, Երևան, 2019 թ., էջ 104-105:

Տարածաշրջանային ինտեգրման (համագործակցության) հաջորդ կարևորագույն ոլորտը ներդրումներն են: Այսրկովկասյան և տարածաշրջանի մյուս երկրների կողմից 2017-2018 թթ. ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների գույտ հոսքերի ծավալների ու կառուցվածքի ուսումնասիրությունը (Աղյուսակ 3) վկայում է, որ եթե 2017 թ. ԵԱՏՄ երկրների բաժինը կազմել է -13.0 % (ներդրումները ՀՀ-ից դուրս են հոսել), ապա 2018 թ. այդ ցուցանիշը կազմել է 53.8 % (ներդրումները մուտք են գործել ՀՀ): Այդ ցուցանիշները ՀՀ հարևան երկրների համար կազմել են համապատասխանաբար 0 % և -1.2 %:

Աղյուսակ 3

2017-2018 թթ. այսրկովկասյան և տարածաշրջանի մյուս երկրների կողմից ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների գույտ հոսքերի ծավալներն ու կառուցվածքը

	2017 թ. հունվար-դեկտեմբեր, գույտ հոսքեր				2018 թ. հունվար-դեկտեմբեր, գույտ հոսքեր			
	ընդամենը ներդրումներ, մլն դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	որից՝ ուղղակի ներդրումներ, մլն	%-ով ուղղակի ներդրումների	ընդամենը ներդրումներ, մլն դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	որից՝ ուղղակի ներդրումներ, մլն դրամ	%-ով ուղղակի ներդրումների
Ընդամենը	74,619.9	100.0	93,043.9	100.0	27,581.4	100.0	111,870.5	100.0
այդ թվում՝								
ԵԱՏՄ երկրներ, ընդամենը	-9,560.0	-12.8	-12,070.5	-13.0	43,608.2	158.1	60,194.2	53.8
Ռուսաստանի Դաշնություն	-9,752.3	-13.1	-12,073.1	-13.0	43,507.1	157.7	60,194.3	53.8
Բելառուս	192.3	0.3	2.6	0.0	101.1	0.4	-0.1	-0.0
Ղազախստան	-	-	-	-	-	-	-	-
Ղրղզստան	-	-	-	-	-	-	-	-
ՀՀ հարևան երկրներ, ընդամենը	-212.3	-0.3	2.2	0.0	1,764.8	6.4	-1,389.9	-1.2
այդ թվում՝								
Իրանի Իսլամական Հանրապետություն	-31.3	-0.0	85.8	0.1	-149.9	-0.5	-	-
Վրաստան	-181.0	-0.2	-83.6	-0.1	2,534.6	9.2	-770.0	-0.7
Թուրքիա	-	-	-	-	-	-	-	-
Ադրբեջան	-	-	-	-	-	-	-	-

Արցախի Հանրապետություն	-	-	-	-	-619.9	-2.2	-619.9	-0.6
---------------------------	---	---	---	---	--------	------	--------	------

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-փետրվարին, ՀՀ ՎԿ, Երևան, 2019 թ., էջ 94-95:

Տարածաշրջանի տնտեսական ինտեգրման կարևորագույն ցուցանիշներից են դրա երկրների միջև ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց՝ ոչ առևտրային նպատակներով կատարված փոխանցումների ծավալները մատնանշողները (Աղյուսակ 4): Բերված տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց՝ ոչ առևտրային նպատակներով կատարված փոխանցումների էական մասը բաժին է ընկնում հիմնականում Ռուսաստանի Դաշնությանը և ԱՄՆ-ին, իսկ ՀՀ հարևան երկրների բաժինը փոքր է: Գալով ընդհանուր ցուցանիշներին՝ 2018 թ. ՀՀ կենտրոնական բանկի տվյալներով ընդամենը ներհոսքը կազմել է 1785.6 մլն ԱՄՆ դոլար, արտահոսքը՝ 1188.4 մլն ԱՄՆ դոլար, իսկ զուտ ներհոսքը՝ 597.2 մլն ԱՄՆ դոլար: Նշված մեծություններից ՌԴ բաժինը կազմել է համապատասխանաբար 1050.0 մլն ԱՄՆ դոլար (կամ ամբողջի 58.8 %), 471.7 մլն ԱՄՆ դոլար (39.7 %) և 578.3 մլն ԱՄՆ դոլար (96.8 %):

Աղյուսակ 4

2016-2017 թթ. ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումներն ու դրանց կառուցվածքը՝ ըստ երկրների

Երկիրը	2017			2016		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ընդամենը	1756485	1024993	731492	1532883	816982	715901
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Ռուսաստանի Դաշնություն	1064984	376132	688853	896916	333400	563516
	60.6	36.7	94.2	58.5	40.8	78.7
ԱՄՆ	183253	196322	-13068	176569	83862	92707
	10.4	19.2	-1.8	11.5	10.3	12.9
Ուկրաինա	9102	13649	-4547	9298	10705	-1407
	0.5	1.3	-0.6	0.6	1.3	-0.2
Ղազախստան	46839	2625	44214	18894	4368	14526
	2.7	0.3	6.0	1.2	0.5	2.0
Գերմանիա	38568	28866	9702	52134	23776	28358
	2.2	2.8	1.3	3.4	2.9	4.0
Իսպանիա	9891	19387	-9496	8839	12544	-3705
	0.6	1.9	-1.3	0.6	1.5	-0.5
Ֆրանսիա	26291	15427	10864	30365	14589	15776
	1.5	1.5	1.5	2.0	1.8	2.2
ԱՄԷ	27105	21393	5712	19509	22896	-3386
	1.5	2.1	0.8	1.3	2.8	-0.5
ՉԺՀ	4454	64710	-60257	2939	56629	-53690
	0.3	6.3	-8.2	0.2	6.9	-7.5
Թուրքիա	1446	10306	-8860	2517	8154	-5637
	0.1	1.0	-1.2	0.2	1.0	-0.8
Այլ երկրներ	344550	276176	68374	314903	246058	68845
	19.6	26.9	9.3	20.5	30.1	9.6

* Համարիչում՝ հազ. ԱՄՆ դոլար, հայտարարում՝ %-ով ընդամենի նկատմամբ:
Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի 20.08.2019 թ. դրությամբ տեղադրված տվյալները, առցանց հասանելի է <https://www.cba.am/am/SitePages/ppperiodicals.aspx> հղումով:

Այսպիսով՝ վերոնշյալ տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ տարածաշրջանային համագործակցության ոլորտում Հայաստանի Հանրապետությունը էական բարելավումներ և փոփոխություններ մտցնելու կարիք ունի՝ նկատի ունենալով գործընկերության նոր ձևերի ու կառուցակարգերի կիրառումը և նոր շուկաների ու գործընկեր երկրների որոնումը:

3.5. Համագործակցության բացակայության պատճառով ՀՀ և այսրկովկասյան ու տարածաշրջանի մյուս երկրների կրած տնտեսական կորուստները

Որևէ տնտեսության (հատկապես փոքր ու բաց) արտաքին ապրանքաշրջանառությունը և այլ տնտեսությունների հետ կապերի արդյունավետությունն ուսումնասիրելիս նախնառաջ անհրաժեշտ է անդրադառնալ դրա այն հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներին, որոնք վերաբերում են ապրանքների, ծառայությունների և կապիտալի փոխանակությանը: Այնուհետև հարկավոր է կառուցել մակրոտնտեսական մոդել, որը կարտահայտի այդ փոփոխականների միջև գործող կապը, որից հետո էլ՝ այս մոդելի միջոցով պարզել, թե ինչպիսին է այդ և մյուս երկրների տնտեսական քաղաքականությունների ազդեցությունը ապրանքների, ծառայությունների և կապիտալների հոսքերի վրա:

Նշված ճանապարհով տնտեսական վերլուծության իրականացնելու համար հիմք է ծառայում երկրի վճարային հաշվեկշիռը: Վճարային հաշվեկշիռը երկրի ռեզիդենտների և աշխարհի մյուս երկրների միջև որոշակի ժամանակահատվածում (սովորաբար մեկ տարվա ընթացքում) իրականացված բոլոր տնտեսական գործարքների հանրագումարն է: Այն կարևորագույն կողմնորոշիչ է մակրոտնտեսական (ներառյալ՝ հարկաբյուջետային, դրամավարկային, արտաքին առևտրի, արտաբաժնային) քաղաքականության մշակման համար:

Նախորդ տարիների ընթացքում բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ՀՀ վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի տարբերությունը բացասական է եղել (ի դեպ, այդ պատճառահետևանքային կապերի և դրանց քանակական գնահատման հարցերն առանձին հետազոտության թեմա են): Աղյուսակ 5-ում բերված են 2000-2018 թթ. ՀՀ վճարային հաշվեկշռի (տարեկան) առանձին հոդվածները և հաշվեմնացորդի տարբերությունը: Աղյուսակի տվյալները փաստում են, որ թեև վերջին տարիների ընթացքում (2017-2018 թթ.) ՀՀ վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի տարբերությունը 2010 թ. համեմատությամբ զգալիորեն նվազել է, սակայն այն դեռևս շարունակում է մնալ բարձր: Իսկ 2015-2016 թթ. ցուցանիշները, որոնք, առաջին հայացքից թվում է, բարելավվել են, իրականում գրանցվել են տնտեսական աճի նվազման հետևանքով (2016 թ. ՀՀ տնտեսական հավելաճի տեմպը կազմել է 0.2 %, որը հետձգնաժամային շրջանի ամենացածր ցուցանիշն է, իսկ սպառողական գների ինդեքսին՝ 98.6 %, այսինքն՝ նկատվել է գնանկում (դեֆլացիա)): Ակներև է նաև, որ ՀՀ վճարային հաշվեկշռի մնացորդի տարբերությունը հիմնականում ձևավորվում է ընթացիկ հաշվի հիման վրա (ապրանքների ու ծառայությունների արտահանման և ներմուծման տարբերության):

Աղյուսակ 5

ՀՀ վճարային հաշվեկշռի (տարեկան) առանձին հոդվածները և հաշվեմնացորդի տարբերությունը 2000-2018 թթ., մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշը	2000	2005	2010	2015	2016	2017	2018
1. Ընթացիկ հաշիվ	-301.7	-123.9	-1,261.4	-272.4	-238.1	-279.7	-1,130.6
Ապրանքներ և ծառայություններ	-531.8	-782.6	-2,326.5	-1,281.8	-1,015.8	-1,403.3	-1,913.8

Ապրանքներ	-466.9	-634.7	-2,065.7	-1,186.4	-944.4	-1,375.4	-1,766.0
Ծառայություններ	-64.8	-147.9	-260.8	-95.4	-71.4	-27.9	-147.8
Սկզբնական եկամուտներ	59.0	206.0	458.3	442.9	224.2	463.3	162.1
Երկրորդային եկամուտներ	171.1	452.7	606.8	566.5	553.4	660.3	621.1
2. Կապիտալի հաշիվ	13.0	84.0	98.9	65.3	34.9	46.3	67.6
3. Ֆինանսական հաշիվ	-216.1	-203.3	-1,318.5	-356.5	-431.6	-540.1	-689.2
Պահուստային ակտիվներ	19.2	214.0	-128.7	332.9	454.6	49.8	-46.3
Զուտ սխալներ և բացթողումներ	72.6	-163.4	-155.9	-149.3	-228.3	-306.7	373.8
Վճարային հաշվեկշռի հաշվե-մնացորդի տարբերությունը	-413.0	-192.7	-2,765.7	-380.0	-408.5	-1,030.4	-1,424.8

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի 22.08.2019 թ. դրությամբ հրապարակած տվյալները, առցանց հասանելի է <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> հղումով:

Իսկ ինչո՞ւ է կարևոր բարելավել ապրանքների ու ծառայությունների արտահանման և ներմուծման գործարքների տարբերությունը: Բանն այն է, որ ներկայումս ցանկացած երկրի տնտեսական գործունեության գնահատման համար օգտագործվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՀՆԱ} = C + I + G \pm \Delta E,$$

որում C - ն հասարակության կողմից սպառման ծավալն է, I - ն՝ կատարված համախառն (ընդհանուր) ներդրումներինը, G -ն կառավարության ծախսերն են, իսկ ΔE - ն՝ զուտ արտահանումը (արտահանման և ներմուծման տարբերությունը):

Բանաձևից պարզ է, որ ՀՆԱ-ի մեծությունն ուղղակի կախվածության մեջ է ապրանքների ու ծառայությունների արտահանման և ներմուծման տարբերությունից, այսինքն, երբ ապրանքների ու ծառայությունների արտահանման ծավալը գերազանցում է ներմուծման ծավալը, ՀՆԱ-ն մեծանում է, իսկ հակառակ դեպքում՝ նվազում: Սա է պատճառը, որ աշխարհի բոլոր երկրները ձգտում են ավելի մեծ արագությամբ ավելացնելու արտահանման, այլ ոչ թե ներմուծման չափերը:

Իսկ ինչպե՞ս է չափվում երկու երկրների միջև համագործակցության շահավետությունը: Այլ խոսքով, տվյալ ապրանքը կամ ծառայությունը ո՞ր երկրից է պետք ձեռք բերել, կամ գուցե պետք է այն արտադրել հայրենի երկրում: Այդ հարցերի պատասխանը տրվել է դասական տնտեսագիտության հիմնադիրների կողմից, իսկ հետագայում լրացվել և արդիականացվել է տնտեսագետների հաջորդ սերունդների ջանքերով: Եթե փորձենք կարճ պատասխան տալ, ապա համագործակցության հիմքում դրված է երկրների բացարձակ և հարաբերական առավելությունների տեսությունը: Չխորանալով մասնագիտական մանրամասնությունների և բոլոր նրբությունների ու կողմերի մեջ՝ նկատենք, որ հարաբերական առավելությունների տեսության համաձայն՝ երկրի հարաբերական առավելությունների գործակիցը (ՀԱԳ-ը) բնութագրում է տվյալ ապրանքի կամ ծառայության մասնագիտացման աստիճանը և հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՀԱԳ} = \frac{U - \bar{U}}{U + \bar{U}} \times 100,$$

որում U-ն արտահանման ծավալն է, իսկ $\bar{U}$ -ն՝ ներմուծմանը:

ՀԱԳ-ը տատանվում է [-1, +1] (տոկոսային արտահայտության դեպքում՝ [-100, +100]) միջակայքում, ընդ որում՝ ՀԱԳ-ը հավասար է -1-ի (-100), երբ երկիրը միայն ներմուծում է, իսկ +1-ի (+100), երբ միայն արտահանում է: Որքան ՀԱԳ-ը մոտ է +1-ի, այնքան բարձր է տվյալ երկրի մասնագիտացման

աստիճանը, և ընդհակառակը: Քանի որ երկրի ՀԱԳ-ն արտահայտում է երկրի ապրանքների ու ծառայությունների արտահանման և ներմուծման ողջ ներուժը, այն նաև երկրի տնտեսության ինչպես միկրո- և մակրոտնտեսական, այնպես էլ մեզատնտեսական որակի ցուցիչ է: Հավելված 1-ում ամփոփված են ՀՀ 2017-2018 թթ. արտաքին առևտրաշրջանառության տվյալները (ըստ երկրների) և դրանց ՀԱԳ-երը: Իսկ ՀՀ խոշորացված անվանացանկով ապրանքախմբերի ՀԱԳ-երը բերված են աղյուսակ 6-ում:

Ըստ հավելված 1-ի տվյալների՝ ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ՀԱԳ-երի ճնշող մեծամասնությունը ինչպես 2017 թ., այնպես էլ 2018 թ. եղել են զգալիորեն բացասական, ընդ որում՝ 2018 թ. այս ցուցանիշները 2017 թ-ի համեմատ նկատելիորեն վատացել են: 2018 թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ՀԱԳ-երը դրական են եղել Ղազախստանի, Ղրղզստանի, Բելգիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Նիդերլանդների, Շվեյցարիայի, Իրաքի և Կանադայի պարագաներում: Ուստի նշված երկրների հետ ՀՀ-ն պետք է խորացնի և ընդլայնի առևտրատնտեսական կապերը, քանի որ այդ համագործակցությունից մեր երկիրը շահում է: Գալով ՀՀ և հարևան երկրների միջև առևտրաշրջանառության ՀԱԳ-երին՝ Վրաստանի հետ այն կազմել է -0.010, Իրանի հետ՝ -0.482, Թուրքիայի հետ՝ -0.980: Ակներև է, որ ՀՀ արտաքին առևտուրը իր հարևան երկրների հետ կարիք ունի էական բարելավման, այն է՝ պետք է զգալիորեն ավելացվեն արտահանման ծավալները:

Աղյուսակ 6

ՀՀ արտահանման և ներմուծման ծավալները և դրանց ՀԱԳ-երը ըստ ապրանքային բաժինների, 2017-2018 թթ.

	2017			2018		
	Արտահա- նում, հազ. ԱՄՆ դոլար	Ներմու- ծում, հազ. ԱՄՆ դոլար	ՀԱԳ	Արտահա- նում, հազ. ԱՄՆ դոլար	Ներմու- ծում, հազ. ԱՄՆ դոլար	ՀԱԳ
ԸՆԴԱՄԵՆԸ	2,237,697.6	4,097,065.7	-0.294	2,411,934.8	4,963,227.3	-0.346
այդ թվում՝						
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	58,538.9	133,668.6	-0.391	50,640.2	131,826.8	- 0.445
բուսական ծագման արտադրանք	63,360.5	190,768.1	-0.501	93,655.9	217,910.7	- 0.399
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	115.5	49,155.1	-0.995	77.0	55,023.7	- 0.997
պատրաստի սննդի արտադրանք	524,123.3	353,075.7	0.195	553,358.5	399,669.9	0.161
հանքահումքային արտադրանք	675,922.7	644,914.4	0.023	644,368.0	718,554.2	- 0.054
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	29,521.5	406,878.1	-0.865	28,456.4	395,977.8	- 0.866

պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	10,283.6	171,710.2	-0.887	14,275.5	199,626.0	- 0.867
կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	10,345.9	19,361.9	-0.303	13,723.9	24,370.1	- 0.279
փայտ և փայտյա իրեր	2,347.0	45,488.3	-0.902	1,927.0	56,540.9	- 0.934
թուղթ և թղթից իրեր	1,187.8	77,408.0	-0.970	1,356.5	92,128.2	- 0.971
մանածագործական իրեր	136,084.0	263,599.2	-0.319	225,035.3	318,123.9	- 0.171
կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ	2,829.7	45,659.3	-0.883	4,476.2	57,228.3	- 0.855
քարից, գիպսից, ցեմենտից իրեր	16,008.7	86,771.5	-0.688	24,181.7	93,952.3	- 0.591
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	291,027.4	233,407.8	0.110	306,355.2	286,242.7	0.034
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	268,838.7	291,969.4	-0.041	296,610.8	340,081.2	- 0.068
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	41,399.5	628,435.4	-0.876	43,596.2	935,308.5	- 0.911
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	15,876.4	247,683.1	-0.880	26,283.5	362,133.3	- 0.865
սարքեր և ապարատներ	39,378.5	83,645.6	-0.360	52,800.5	118,260.1	- 0.383
տարբեր արդյունաբերական ապրանքներ	49,610.6	123,206.5	-0.426	30,046.6	160,064.6	- 0.684
արվեստի ստեղծագործություններ	897.5	259.6	0.551	709.9	204.2	0.553

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ՎԿ, 2019 թ., էջ 132:

Ներկայացված ուսումնասիրությունը վկայում է տարածաշրջանի երկրների միջև ապրանքների ու ծառայությունների արտահանման և ներմուծման զգալի խզվածքի մասին, ինչի հետևանքով մեր հանրապետությունից ռեսուրսների զգալի ծավալներ արտահոսում են այլ երկրներ: Ակներն է նաև, որ այս իրավիճակի պատճառները բազմաթիվ են և բազմաշերտ: Դրանց թվին կարելի է դասել աշխարհաքաղաքական, տնտեսական, սոցիալական, պատմական և այլ գործոնները: Կասկած չի հարուցում նաև այն փաստը, որ հարևան հանրապետությունների հետ հայտնի հակասությունների պատճառով Հայաստանի Հանրապետությունը զգալի տնտեսական կորուստներ է կրում:

Այսրկովկասյան տարածաշրջանի երկրների միջև տնտեսական ինտեգրման ցածր մակարդակի մասին են վկայում մեր կողմից հաշվարկված աղյուսակ 7-ի տվյալները: Բավական է նշել, որ, օրինակ, 2010 թ. տարածաշրջանի երկրների արտահանումը այսրկովկասյան երկրներ կազմել է ամբողջ արտահանման 5,92 %-ը (3519,3 մլն ԱՄՆ դոլար), հարևան երկրներ՝ համապատասխանաբար 15,3 % (24123,2 մլն ԱՄՆ դոլար), ներմուծման թվերը կազմել են

համապատասխանաբար 0.79 % (2011,1 մլն ԱՄՆ դոլար) և 8,97 % (22711,7 մլն ԱՄՆ դոլար): 2014 թ. (քանի որ 2015 թ. համար բացակայում են Իրանի Իսլամական Հանրապետության և Ադրբեջանի ցուցանիշները, այդ պատճառով էլ վերցվել են 2014 թ. տվյալները) այդ նույն ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 3,3 % (8567,5 մլն ԱՄՆ դոլար) և 0,6 % (1879,2 մլն ԱՄՆ դոլար), 2017 թ.՝ 1,5 % (3662.7 մլն ԱՄՆ դոլար) և 8,0 % (19252.3 մլն ԱՄՆ դոլար), իսկ ներմուծումը՝ 0,6 % (1626.9 մլն ԱՄՆ դոլար) և 8,5 % (21535.3 մլն ԱՄՆ դոլար): Հետաքրքիր է նաև ընդգծել, որ ստեղծված իրավիճակում ՀՀ-ի և Ադրբեջանի համեմատությամբ կտրուկ աճ են գրանցել Վրաստանի ցուցանիշները:

Աղյուսակ 7

Հարավ-Կովկասյան երկրների միջտարածաշրջանային արտահանման և ներմուծման ծավալները
2005-2017 թթ.

Երկրները	Արտահանում					Ներմուծում				
	Ընդամենը	Հարավային Կովկաս		Հարևան երկրներ		Ընդամենը	Հարավային Կովկաս		Հարևան երկրներ	
	մլն ԱՄՆ դոլար	մլն ԱՄՆ դոլար	%	մլն ԱՄՆ դոլար	%	մլն ԱՄՆ դոլար	մլն ԱՄՆ դոլար	%	մլն ԱՄՆ դոլար	%
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2005										
Հայաստան	882.8	34.1	3.9	59.7	6.8	1641.4	39.3	2.4	193.4	11.8
Վրաստան	845.7	122.9	14.5	402.7	47.6	2435.6	272.7	11.2	963.6	39.6
Ադրբեջան	8318.7	0.7	0.0	6.2	0.1	7806.6	256.3	3.3	351.1	4.5
Իրան	37339.7	523.9	1.4	3240.4	8.7	38072.4	175.4	0.5	1391.6	3.7
Թուրքիա	69942.5	799.9	1.1	6292.7	9.0	113850.5	575.6	0.5	8169.1	7.2
Ընդամենը	117329.4	1481.5	1.26	10001.7	8.52	163806.5	1319.3	0.81	11068.8	6.76
2010										
Հայաստան	973.6	48.2	5.0	88.5	9.1	3606.9	49.7	1.4	478.0	13.3
Վրաստան	1278.0	176.8	13.8	414.8	32.5	4747.1	568.2	12.0	1746.2	36.8
Ադրբեջան	20765.3	411.0	2.0	1480.4	7.1	6092.0	50.4	0.8	2085.1	34.2
Իրան	25418.3	562.6	2.2	8774.4	34.5	53328.5	184.5	0.3	3197.0	6.0
Թուրքիա	109670.1	2320.7	2.1	13365.1	12.2	185523.7	1158.3	0.6	15205.4	8.2
Ընդամենը	158105.3	3519.3	5.92	24123.2	15.3	253298.2	2011.1	0.79	22711.7	8.97
2015										
Հայաստան	1482.7	66.7	4.5	192.0	12.9	3257.0	114.0	3.5	401.5	12.3
Վրաստան	20720.3	6674.0	32.2	19833.6	95.7	1792.7	1892.8	105.6	2409.1	134.4
Ադրբեջան	11326.8	449.1	4.0	1458.1	12.9	9211.1	68.0	0.7	2767.7	30.0
Իրան	-	-	-	-	-	-	-	-	-	-
Թուրքիա	143935.0	6674.0	4.6	19833.57	13.8	207203.4	6551.7	3.2	11014.0	5.3

Ընդամենը	177464.8	13863.8	7.8	41317.3	23.3	221464.2	8626.5	3.9	16592.3	7.5
2017										
Հայաստան	2041.3	143.2	7.0	225.9	11.1	4076.7	92.9	2.3	500.3	12.3
Վրաստան	2727.9	480.9	17.6	1092.2	40.0	7982.4	891.1	11.2	3054.5	38.3
Ադրբեջան	13797.7	471.3	3.4	2441.4	17.69	8766.5	74.6	0.9	3069.1	35.01
Իրան	66361.7	-	-	-	-	51781.0	-	-	-	-
Թուրքիա	157055	2567.33	1.6	15492.8	9.9	233792	568.3	0.2	14911.4	6.4
Ընդամենը	241983.6	3662.7	1.5	19252.3	8.0	254617.6	1626.9	0.6	21535.3	8.5
Ընդամենը 2005-2017										
Հայաստան	16675.3	959.9	5.8	1786.9	10.7	44935.6	978.1	2.2	5549.6	12.4
Վրաստան	168023.5	13772.4	8.2	41154.4	24.5	267439.1	12049.3	4.5	71190.2	26.6
Ադրբեջան	232652.3	5345.3	2.3	22840.5	9.8	101407.0	1167.1	1.2	31858.0	31.4
Իրան	370579.1	9285.6	2.5	50127.4	13.5	257630.9	788.6	0.3	13139.0	5.1
Թուրքիա	1631281.0	34066.8	2.1	211360.8	13.0	2554619.1	15261.4	0.6	171509.8	6.7
Ընդամենը	2485572.9	63430.3	2.6	327270.0	13.2	3226031.7	30244.5	0.9	293246.6	9.1

Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է www.intracen.org www.armstat.am կայքերի, իսկ 2011-2012 թթ. ցուցանիշները՝ www.armstat.am և www.trademap.org կայքերի տվյալների հիման վրա:

Ծանոթագրություն

Իրանի Իսլամական Հանրապետության հարևան երկրներն են Ադրբեջանը, Աֆղանստանը, Թուրքիան, Թուրքմենստանը, Իրաքը, Պակիստանը, Սիրիան, Հայաստանը, Քուվեյթը: **Թուրքիայի** հարևան երկրներն են Ադրբեջանը, Բուլղարիան, Իրանը, Կիպրոսը, Հայաստանը, Հունաստանը, Սաուդյան Արաբիան, Սիրիան, Վրաստանը: **Վրաստանի** հարևան երկրներն են Ռուսաստանի Դաշնությունը, Ադրբեջանը, Հայաստանը, Թուրքիան:

Ադրբեջանի հարևան երկրներն են Ռուսաստանի Դաշնությունը, Վրաստանը, Հայաստանը, Թուրքիան, Իրանը:

3.6. Արցախի Հանրապետության տնտեսության մասնագիտացման խորացման հիմնական ուղղությունները

Աղյուսակ 8-ում ներկայացված են Արցախի Հանրապետության տնտեսության մասնագիտացման մասին մի շարք ուշագրավ տվյալներ: Ելնելով ՀԱԳ-երի մեծություններից՝ կարելի է ծրագրավորել և խորացնել Արցախի Հանրապետության տնտեսության մասնագիտացման մակարդակը: Ի վերջո դրանք կարող են հիմք դառնալ Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ծրագրերի և ռազմավարությունների մշակման համար: Ակնհերթ է նաև, որ ապրանքային այն խմբերը, որոնց ՀԱԳ-երն ունեն փոքր մեծություններ (մոտ են -1-ին), և ցանկություն կա դրանք փոփոխելու դրական ուղղությամբ, պահանջում են ինչպես երկար ժամանակ, այնպես էլ աշխատանքային, նյութական և ֆինանսական միջոցներ: Այդպիսի մոտեցումը հանգեցնելու է տնտեսության կառուցվածքային բարեփոխումների, որոնք արդարացված կլինեն, եթե այդպիսով ավելացնեն տվյալ ապրանքային խմբի արտահանման ծավալը և նվազեցնեն ներմուծման ծավալը:

Ելնելով ՀԱԳ-երի մեծություններից՝ թվարկենք Արցախի Հանրապետության տնտեսական մասնագիտացման 10 հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները՝ 1. թանկարժեք քարեր և մետաղներ (2011-2017 թթ. ՀԱԳ-ի միջին տարեկան մեծությունը՝ -0.023), 2. հանքահումքային մթերքներ (-0.121), 3. կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ (-0.131), 4. փայտ և փայտյա իրեր (-0.204), 5. բուսական ծագման արտադրանք (-0.344), 6. կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք (-0.482), 7. պատրաստի սննդի արտադրանք (-0.781), 8. յուղեր և ճարպեր (-0.790), 9. մեքենաներ ու սարքավորումներ (-0.846) և 10. պլաստմասսայի, կաուչուկի և ռետինե արտադրանք (-0.871):

Աղյուսակ 8

Արցախի Հանրապետության արտաքին առևտրի համեմատական առավելությունների գործակիցները (ՀԱԳ-երը) 2011-2017 թթ.՝ ըստ ապրանքային խմբերի

	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Ընդամենը 2011-2017
Ընդամենը, այդ թվում	-0.595	-0.669	-0.637	-0.647	-0.605	- 0.520	-0.295	-0.557
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	-0.733	-0.754	-0.730	-0.430	-0.274	- 0.112	-0.231	-0.482
Բուսական ծագման արտադրանք	-0.550	-0.284	-0.498	-0.531	-0.463	- 0.087	-0.068	-0.344
Յուղեր և ճարպեր	-1.000	-0.991	-0.870	-0.969	-0.373	- 0.652	-0.454	-0.790
Պատրաստի սննդի արտադրանք	-0.761	-0.777	-0.723	-0.785	-0.793	- 0.825	-0.806	-0.781

Հանքահումքային մթերքներ	-0.122	-0.394	-0.366	-0.294	-0.330	- 0.099	0.353	-0.121
Քիմիական արտադրության ապրանքներ	-0.996	-0.991	-0.989	-0.988	-0.991	- 0.978	-0.981	-0.987
Պլաստմասսա, կաուչուկ, ռետին	-0.820	-0.693	-0.906	-0.957	-0.958	- 0.999	-0.985	-0.871
Կաշի և կաշվե իրեր	-0.856	-0.934	-0.861	-0.865	-0.926	- 0.955	-0.954	-0.921
Փայտ և փայտյա իրեր	-0.550	-0.342	-0.107	-0.230	-0.184	- 0.050	0.233	-0.204
Թուղթ և թղթե իրեր	-1.000	-1.000	-0.929	-0.971	-0.972	- 0.999	-0.990	-0.978
Մանածագործական իրեր	-0.918	-0.976	-0.981	-0.871	-0.780	- 0.838	-0.841	-0.892
Կոշիկեղեն, հովանոցներ, գլխարկներ	-0.128	-0.276	-0.387	-0.210	-0.160	0.090	0.195	-0.131
Քարից, գիպսից, ցեմենտից իրեր	-0.939	-0.943	-0.829	-0.904	-0.887	- 0.905	-0.862	-0.903
Թանկարժեք քարեր և մետաղներ	0.061	-0.058	-0.020	-0.285	0.584	- 0.135	-0.039	-0.023
Ոչ թանկարժեք մետաղ-ներ և դրանցից իրեր	-0.700	-0.727	-0.991	-0.959	-0.965	- 0.990	-0.991	-0.895
Մեքենաներ և սարքավորումներ	-0.949	-0.961	-0.795	-0.826	-0.783	- 0.772	-0.838	-0.846
Տրանսպորտային միջոցներ	-0.917	-0.957	-0.730	-0.943	-0.876	- 0.931	-0.964	-0.912
Սարքեր և ապարատներ	-0.976	-0.942	-1.000	-0.886	-0.927	- 0.963	-0.989	-0.952
Կահույք, խաղալիքներ, այլ պատրաստի իրեր	-0.979	-0.986	-0.977	-0.924	-0.934	- 0.946	-0.942	-0.957
Արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրեր	-1.000	-1.000	-0.891	-1.000	-0.904	- 1.000	-1.000	-0.978

Կազմվել է ՀՀ վիճակագրական տարեգիրք 2009-2015 թթ., Ստեփանակերտ, ԼՂՀ ԱՎԾ, 2016, էջ 284-288 և www.stat.nkr.am տվյալների հիման վրա:

Հավելված 1

2017-2018 թթ. ՀՀ արտաքին առևտուրը՝ ըստ երկրների, և դրա ՀԱԳ-երը

	2017 թ.			2018 թ.		
	Արտահանում, հազ. ԱՄՆ դոլար	Ներմուծում (ըստ ապրանքի ծագման երկրի), հազ. ԱՄՆ դոլար	ՀԱԳ	Արտահանում, հազ. ԱՄՆ դոլար	Ներմուծում (ըստ ապրանքի ծագման երկրի), հազ. ԱՄՆ դոլար	ՀԱԳ
ԸՆԴԱՄԵՆԸ	2,237,697.6	4,097,065.7	- 0.294	2,411,934.8	4,963,227.3	- 0.346
որից՝						
ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ	595,055.8	1,347,813.3	- 0.387	719,163.9	1,490,927.7	- 0.349
այդ թվում՝						
ԵԱՏՄ երկրներ	570,999.4	1,216,432.1	- 0.361	688,975.9	1,300,524.0	- 0.307
այդ թվում՝						
Ռուսաստանի Դաշնություն	557,256.2	1,173,233.7	- 0.356	666,501.7	1,257,942.1	- 0.307
Բելառուս	7,051.2	39,064.9	- 0.694	11,736.9	38,589.3	- 0.534
Ղազախստան	4,928.2	4,044.6	0.098	9,766.8	3,692.4	0.451
Դրոգստան	1,763.8	88.8	0.904	970.5	300.2	0.528
ԱՊՀ այլ երկրներ	24,056.4	131,381.2	- 0.690	30,188.0	190,403.6	- 0.726
այդ թվում՝						
Ուկրաինա	10,193.5	115,529.1	- 0.838	18,255.8	153,629.9	- 0.788
Թուրքմենստան	6,038.1	10,217.7	- 0.257	3,093.4	27,468.0	- 0.798
Ուզբեկստան	2,284.0	1,399.9	0.240	2,440.2	2,562.5	- 0.024
Այլ երկրներ	5,540.8	4,234.5	0.134	6,398.6	6,743.2	- 0.026
ԵՄ ԵՐԿՐՆԵՐ	633,757.3	903,807.4	- 0.176	683,847.0	1,146,227.3	- 0.253
այդ թվում՝						
Ավստրիա	1,943.1	20,974.3	- 0.830	6,370.5	24,608.3	- 0.589
Բելգիա	45,785.2	43,311.5	0.028	49,202.2	39,445.9	0.110
Բուլղարիա	282,332.3	39,966.8	0.752	215,270.5	43,771.6	0.662

Դանիա	735.1	5,546.8	- 0.766	1,815.7	7,177.9	- 0.596
Ֆինլանդիա	1,777.0	23,730.8	- 0.861	271.1	33,155.9	- 0.984
Ֆրանսիա	4,740.3	73,539.0	- 0.879	8,625.3	110,154.4	- 0.855
Գերմանիա	133,128.4	201,151.1	- 0.203	136,079.3	291,914.0	- 0.364
Հունաստան	193.5	48,963.9	- 0.992	271.5	64,623.0	- 0.992
Հունգարիա	2,184.3	12,879.3	- 0.710	678.9	16,370.1	- 0.920
Իտալիա	43,284.8	158,025.1	- 0.570	49,877.3	182,623.9	- 0.571
Լեհաստան	7,947.7	49,302.2	- 0.722	8,307.4	43,997.2	- 0.682
Ռումինիա	3,542.9	8,946.8	- 0.433	54,937.3	14,363.9	0.585
Նիդերլանդներ	88,605.0	32,911.7	0.458	132,356.2	55,869.5	0.406
Միացյալ Թագավորություն	4,937.7	34,720.7	- 0.751	7,636.2	39,183.8	- 0.674
Իսպանիա	1,715.6	35,216.9	- 0.907	393.9	36,842.0	- 0.979
Կիպրոս	123.0	1,521.3	- 0.850	24.6	692.4	- 0.931
Չեխիայի Հանրապետություն	2,589.7	26,749.0	- 0.823	2,903.2	40,016.7	- 0.865
Լիտվա	1,931.0	5,602.0	- 0.487	2,012.9	6,377.6	- 0.520
Սլովակիա	106.5	9,070.9	- 0.977	399.3	9,379.7	- 0.918
Շվեդիա	796.1	28,593.3	- 0.946	367.9	28,516.5	- 0.975
ԵՄ այլ երկրներ	5,358.0	43,084.0	- 0.779	6,045.8	57,143.0	- 0.809
ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ	1,008,884.5	1,845,445.0	- 0.293	1,008,923.9	2,326,072.3	- 0.395
այդ թվում՝						
Կորեայի Հանրապետություն	1,807.0	22,069.8	- 0.849	357.6	35,078.9	- 0.980
Միացյալ Նահանգներ	66,187.5	133,446.1	- 0.337	47,675.2	178,392.3	- 0.578
Արաբական Միացյալ Էմիրություններ	102,206.8	96,458.4	0.029	73,826.0	105,833.0	- 0.178

Իրանի Իսլամական Հանրապետություն	84,123.2	174,698.2	- 0.350	94,203.6	269,417.3	- 0.482
Թուրքիա	913.3	222,920.8	- 0.992	2,527.7	252,682.1	- 0.980
Շվեյցարիա	261,389.3	96,446.6	0.461	336,378.2	128,793.4	0.446
Չինաստան	118,529.4	477,701.5	- 0.602	107,222.4	663,855.5	- 0.722
Բրազիլիա	6.3	62,571.4	- 1.000	75.2	61,728.6	- 0.998
Ճապոնիա	366.1	81,021.2	- 0.991	375.4	99,060.6	- 0.992
Իրաք	117,449.3	201.9	0.997	150,638.0	4,959.9	0.936
Թաիլանդ	8,998.7	22,416.2	- 0.427	788.1	22,860.7	- 0.933
Կանադա	14,994.8	76,572.1	- 0.672	33,233.7	30,081.1	0.050
Վրաստան	152,892.5	88,023.7	0.269	68,696.2	70,105.8	- 0.010
Այլ երկրներ	79,020.3	290,897.1	- 0.573	92,926.6	403,223.1	- 0.625

Կազմվել և հաշվարկվել է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ՎԿ, 2019թ., էջ 128-129-ի տվյալներով: